

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Դեմոկրատ Կուսակցութիւնը «Սուփըր Երեքշաբթի»-էն Ետք

Ամերիկայի Գաղութագրական ընտրութիւններու միջկուսակցական պայքարը թեւակոխեց վճռական փուլ ու հրապարակի վրայ գլխաւորաբար մնացին երկու թեկնածուներ՝ Գաղութային փոխ Գաղութագրի Դեմոկրատ Կուսակցութեան Դերմոկրատ, որ ինքզինք կը նկատէ դեմոկրատ սոցիալիստ:

Ընտրապայքարի ցարդ ամենաթեթ օրը հանդիսացաւ Մարտի 3-ը, որու ընթացքին հրապարակի վրայ մնացած չորս թեկնածուներ պայքարեցան տիրանալու համար աւելի քան 1300 պատգամաւորներուն՝ 14 Գաղութային մէջ, որոնց շարքին երկու մեծ Գաղութային թաղամասեր՝ Քալիֆորնիան իր 494 պատգամաւորներով եւ Թեքսասը իր 228 պատգամաւորներով: Նկատի ունենալով այդ օրուայ վճռական կարեւորութիւնը մամուլը գայն կը կոչէր «Սուփըր Երեքշաբթի»:

Ընտրարշաւը Քալիֆորնիա չհասած շատ մը մեկնաբաններ Դեմոկրատի թեկնածութիւնը սկսած էին նկատել մահաւերձ, նկատի ունենալով որ, առաջին երեք Գաղութայիններուն մէջ՝ Այովա, Նիւ Յամփշայր եւ Նեվադա, ան արձանագրած էր շատ տկար արդիւնքներ: Ան Գաղութայիններուն կ'ունենար յաջող ընտրապայքար տանելու համար ժողովուրդէն Գաղութայիններուն հաւաքելու մէջ, գրասենեակներ բանալու, աշխատողներ վարձելու եւ մանաւանդ հեռատեսիլի ծախսալից ծանուցումներուն գումարներ հասցնելու համար:

Միւս կողմէ, Պայտընի այլ մրցակիցները ու գլխաւորաբար Պրընցի Սենտրոյ, ժողովուրդի նուիրած փոքր գումարներով, ամսական 30-40 միլիոն տոլար գումար կը հաւաքէր, տասնեակ հազարաւոր համակիրներու մասնակցութեամբ հանրահաւաքներ կ'ունենար ու կը յայտարարէր, որ եկած է Ամերիկայի մէջ «յեղափոխութիւն» կատարելու ժամանակը եւ երկիրը ազատելու խոշոր ընկերութիւններու եւ դրամատուներու ճիրաններէն ու ժողովուրդը դարձնելու երկրին տէրը:

Սենտրոյի յառաջ մղած գաղափարները, մանաւանդ առողջապահութիւնը բոլորի համար ձրի դարձնելու ծրագիրը, մեծ ընդունելութիւն կը գտնէին յատկապէս երիտասարդութեան եւ ուսանողութեան մօտ, որոնք դարձած էին ամենէն երեք թեկնածուի, ամենէն ջերմ համակիրները,

Պրընցի Սենտրոյ Զաղթեց Քալիֆորնիոյ Մէջ, Սակայն Դեմոկրատներուն Առաջատար Թեկնածուն

Երեքշաբթի, Մարտ 3-ին, Ամերիկայի 14 նահանգներու մէջ տեղի ունեցան նախնական՝ միջկուսակցական ընտրութիւններ, որոնց ընթացքին նախկին փոխ նախագահ Դեմոկրատ արձանագրեց անակնկալ յաղթանակներ:

Տասը նահանգներու մէջ, որոնց շարքին Թեքսասը, Մասաչուսեթսը Միչիգան, Արիզոնա, Օքլահոմա եւ այլ տեղեր Պայտըն արձանագրեց մեծ յաջողութիւններ, դառնալով Դեմոկրատ Կուսակցութեան առաջատարը՝ յառաջիկայ Նոյեմբերին կայանալիք Ամերիկայի նախագահական ընտրութիւններուն:

Յառաջիկայի թեկնածու Պրընցի Սենտրոյ յաղթանակներ արձանագրեց Ամերիկայի մեծագոյն նահանգին՝ Քալիֆորնիոյ մէջ, ինչպէս նաեւ Քոլորադոյի եւ Ենթակայի մէջ, սակայն այս արդիւնքները սպասուածէն շատ աւելի համեմատ էին:

Դեմոկրատ Կուսակցութեան դրօշակակիրը դառնալու համար թեկնածուները պէտք ունին 1991 պատգամաւորի ձայներուն: Երեքշաբթի օրուայ արդիւնքներէն ետք, Դեմոկրատ, մասնակի տուեալներով ունի 566 պատգամաւոր, իսկ Պրընցի Սենտրոյը՝ 501:

Ամէնուրեք, նկատելի էր ընտրողներու մեծ եւ մասնակիցներու մեծ թիւ: Կը հաղորդուի որ ընտրական



Ընտրողները կը սպասեն երկար շաբթի մէջ՝ քուէարկութեան կեդրոններէն մէկուն առջեւ

որոշ կեդրոններուն առջեւ մարդիկ ժամերով հերթի կը սպասէին են:

Կլէնտլի Ընտրութիւնները Նոյն օրը տեղի ունեցան նաեւ Կլէնտլի քաղաքապետարանի ընտրութիւնները, որոնց ընթացքին եւս արձանագրուեցան անակնկալներ: Քաղաքապետական Խորհուրդի անդամ Վարդան Կարապետեան ստանալով 7426 ձայն, չկարողացաւ ապահովել իր վերընտրութիւնը: Խորհուրդի երեք բաց տեղերը ոչ վերջնական արդիւնք-

ներով բաժին ինկան՝ Փոլա Տըվալին, որ ստացաւ 13469 ձայն, Արտի Քաջախեանին՝ 10939 ձայն, եւ Տան Պրոթմընին՝ 10432 ձայն:

Հայաստան Եւ Արցախ «Ազատութեան Տուն» Ցուցակով Մասամբ Ազատ Երկիրներու Շարքին

«Ազատութեան Տուն» (Freedom House) միջազգային իրաւապաշտպան կազմակերպութիւնը հրատարակած է իր տարեկան գեկոյցը՝ «Ազատութիւնը աշխարհի մէջ - 2020» խորագրին տակ:

Հեղինակաւոր կազմակերպութեան գեկոյցի Հայաստանին վերաբերող մասը ներկայացուցած է բացառապէս Լեռնային Ղարաբաղ արձանագրուած դրական տեղաշարժերը:

Ըստ գեկոյցին, շնորհիւ Հայաստանի մէջ տեղի ունեցած փոփոխութիւններուն 2019 թուականի Սեպտեմբերի տեղական ինքնակառավարման մարմիններու ընտրութիւններուն ընդառաջ Լեռնային Ղարաբաղի տարածքին կար մրցակցութեան եւ քաղհասարակութեան աշխուժութեան անհրաժեշտ քայլերու արձանագրումներու արձանագրումներուն:

Կառուցի վարկանիշային աղիւսակով թէ՛ Լեռնային Ղարաբաղը, թէ՛ Հայաստանը կը դասուին մասամբ ազատ երկիրներու շարքին: Տարածաշրջանի չհասնաչուած պետութիւններու ցանկին մէջ բացի Լեռնային Ղարաբաղէն, մասամբ



ազատ կը գնահատուի նաեւ Աբխազիան: Հայաստանը իր ցուցանիշներով կը գերազանցէ անազատ Ատրպէյճանին, սակայն կը գիջի մասամբ ազատ միւս հարեւանին՝ Վրաստանին:

Ըստ գեկոյցին, անազատ եւ րասիական տարածաշրջանը մարդու իրաւունքներու եւ հիմնարար ազատութիւններու առումով մուշկ պատկեր կը յիշեցնէ, նկատելով, որ Ռուսաստան, Պեյրուսիա, Ուզբեքիստան, Ղազախիստան իշխող ուժերը ճնշումներու գնով կը պահանջեն իշխանութիւնը, Մոլդովիայի բարեփոխումները մեկնարկուած, սակայն չեն աւարտուած:

Տարածաշրջանի միակ դրամապատկերներու ցանկին մէջ բացի Լեռնային Ղարաբաղէն, մասամբ

ՍԴՅԿ-ի 3այտարարութիւնը Մարտ 1-ի Տարեկիցի Առթիւ

2008թ-ի Մարտի 1-ը հայ ժողովրդի պատմութեան ամենաուշադից մեկն է:

Մարտի 1-ին եւ լոյս 2-ի գիշերը խաղաղ ցուցեր իրականացնող ՀՀ քաղաքացիների նկատմամբ իրականացուեց աննախադէպ դաւադրութիւն: Սեփական ժողովրդի վրայ գործադրուեց բիրտ ուժ, կիրառուեցին մահակներ ու էլեկտրական հարուած հասցնող սարքեր, զէնքեր եւ նռնակներ:

Երեւանի կենտրոնական փողոցներում տեղի ունեցած բախումների հետեւանքով զոհուեց 10 մարդ:

12 տարի անց դեռ ոճրագործութիւնը չի բացալալուել եւ չեն պատժուել սպանութիւնների կատարողներն ու կազմակերպիչները:

Ամեն 10 զոհերի ընտանիքներում արդէն 12 տարի է գարնան առաջին օրը սպոյ օր է:

Լիալոյս ենք, որ իշխանութեան քայլերը՝ ուղղուած Մարտի 1-ի ողբերգական իրադարձութիւնների հանգամանքների բացալալուելու, այլեւս սպասեցնել չեն տայ եւ իրական մեղաւորները կատանան իրենց արժանի պատիժը:

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան անունից մեր ցաւակցութիւնն ենք յայտնում զոհերի հարազատներին:

ՍԴՅԿ
Հայաստանի Վարչութիւն
Երեւան Մարտ 1, 2020

ՎԱՅԱՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Աճմեղ Դեմքով Ատելուժեան Իրական Քարոզիչները

ԱՐՄԵՆ ՕՐԱՆԵԱՆ

Եթէ ուշադրութեամբ նայենք, թէ ովքեր եւ ինչպէս են բացայայտ կամ քողարկուած զբաղուել եւ հիմա էլ զբաղուած նախկին իշխանութիւնների համար քարոզչութեամբ, ապա ակնյայտօրէն նրանց կարելի է բաժանել երկու խմբի: Առաջինում քարոզչական «մահապարտների» գունդն է՝ աւանգարդը, որի գործառնութիւնը եղել է եւ կայ բացայայտ կեղծիքների եւ ստերի տարածումը: Սրանց արժէքն ակնյայտօրէն անգամ նախկինների համար մեծ չէր, բայց քանի որ այլ տեղերից պահանջարկ չունէին, ապա ստիպուած էին լինում կատարել քարոզչութեան ամենակերտտ գործը:

Եւ կայ երկրորդ՝ խելացիների ու աւելի զնահատուող խումբը, որի մեծ մասը երբեք հանդէս չի եկել եւ հիմա էլ հանդէս չի գալիս նախկինների բացայայտ կողմնակցի դերում, ներկայումս էին եւ են որպէս, սակայն՝ իրաւաբաններ, իրաւապաշտպաններ, փորձագէտներ, վերլուծաբաններ եւ այլ մասնագիտութիւնների ներկայացուցիչներ, որպէսզի, իբր թէ, չէզոք դիրքերից իբր թէ՛ չէզոք տեսակէտներ ներկայացնեն քաղաքական գործընթացների վերաբերեալ, իսկ իրականում՝ որոշակիօրէն քողարկուած տիրաժամորում էին նախկինների քարոզչութիւնը: Դա էլ որ մարդկանց մօտ տպաւորութիւն ստեղծուէր եւ ստեղծուէր, թէ նախկինների ասածները չէզոք մարդիկ էլ են հաստատում, ուրեմն՝ այստեղ մի բան էն չի:

Եւ ի դէպ, հենց այս երկրորդ խումբն է այսօր վարում ամենավտանգաւոր տեղեկատուական պատերազմը: Պատճառն էլ՝ աւելի քան պարզ է: Եթէ «քարոզչական մահապարտների» գնդի ներկայացուցիչների ասածները մարդիկ կէսից չեն էլ լսում, իսկ լսելուց՝ լաւագոյն դէպքում հայտնելու ցանկութիւն են յայտնում, եւ հետեւաբար՝ նրանց

ՕԳԳ-ն այս րոպէական «շուխուռ» ստեղծելուց անդին չի անցնում, ապա երկրորդները համեմատաբար աւելի զրազէտ են խօսում հայերէն, ոչ թէ կացնային սուտ են տարածում, այլ քողարկուած՝ մասամբ համեմուած ճշմարտութեամբ: Դա պարզագոյն ու յայտնի տեխնոլոգիա է, մասամբ ճշմարտութեամբ համեմուած կեղծիքն աւելի ազդեցիկ կարող է լինել, որովհետեւ մարդը եթէ լսում է իքս նախադասութիւն, ու ինքը հաստատ գիտի, որ այդ իքս նախադասութեան այս կամ այն հատուածը հաստատ ճշմարտութիւն է, ապա ենթագիտակցաբար սկսելու է մտածել, որ գուցէ նախադասութեան միւս հատուածն է՞լ ճշմարտութիւն:

Բայց դառնանք մեր օրեր: Երկրորդ խմբի այս ներկայացուցիչներն այսօր ակտիւօրէն զբաղուած են մէկ միասնական գործով՝ քարոզչական առումով բովանդակագրկել եւ հիմնագրկել նախկինների հանդէպ քրէական հետապնդումները, դա համեմելով այս կամ այն իրադարձութիւնների վերաբերեալ նախկինների վարկածների տարածմամբ: Ասենք՝ Մարտի մէկ, Արցախեան պատերազմ, կոռուպցիա, նախկինում կայացած ընտրութիւններ, Արցախեան հիմնախնդիր, ՍԳ եւ այլն:

Եւ այս ամէնն այդ անձինք իրականացնում են ամենացինիկ երեսպաշտութեամբ, անմեղ հրեշտակի դիմակներով եւ խաղաղասէր աղանու թեւեր հագած:

Ու դա անում են, եթէ ընդհանրացնենք՝ մօտաւորապէս այսպիսի բովանդակութեամբ. «Իշխանութիւնները հեղինակագրկում են հերոսներին, իշխանութիւնները չհեղինակագրկում են բանակը, իշխանութիւնները արշաւ են իրականացնում արցախեան պատերազմի հերոսների դէմ, չի կարելի ուրանալ հերոսների արածները, բա ասում էիք՝ սիրոյ եւ հանդուրժողականութեան միջնորդ է, բայց

ահա եկել ու սեւերի եւ սպիտակների էք բաժանել դաշտը, կանգ առէք, մենք պատերազմի մէջ գտնուող երկիր ենք, չի կարելի երկիրը այսպէս բաժան-բաժան անել, պէտք է դիժ քաշել եւ ամէն ինչ սկսել վրոյից, երկիր կառուցել, ոչ թէ նայել անցեալին», այստեղ էլ այս մարդիկ պարզագոյն մանիպուլացիա են անում՝ յոյսով, որ մարդկանց յիշողութիւնն այնքան կարճ է, որ այս երկու տարում մոռացել են ամէն բան: Որովհետեւ երբ իրենք խօսում են հանդուրժողականութիւնից եւ անցեալի վրայ դիժ քաշելուց, նրանք միայն մէկ բան են ցանկանում. այն է՝ ինչ արել են, արել են, թող բոլորը մոռանան դրա մասին, սիրեն իրենց, հանդուրժեն, քրէական գործեր չհարուցեն, չբարձրաձայնեն այն ամէնը, ինչ մարդիկ մտածում են իրենց մասին: Սա, իհարկէ, իրենց տեսանկիւնից շատ հասկանալի մօտեցում է՝ դիժ քաշել ու անցնել առաջ: Բայց կայ մի բայց: Որեւէ մէկը չի պահանջում տասնեակ հազարներով քրէական գործեր յարուցել բոլորի հանդէպ, ովքեր տարիներ առաջ 1000 կամ 10

հազար դրամ կաշառք են վերցրել եւ զարգանալու փոխարէն միւրճուել համընդհանուր դատավարութիւնների մէջ: Բայց կան արարքներ, որոնք վաղեմութեան ժամկէտ չունեն, եւ դրանց համար պատասխաններ պէտք է տալ: Առաւել եւս, որ դրանց հեղինակները եւ նրանց «անմեղութեան դիմակը հագած» քարոզիչները ոչ միայն չեն զղջում, այլեւ այսօր էլ՝ նոյն տեմպերով, նոյն ատելութեամբ եւ ցինիզմով շարունակում են ատելութիւն եւ կեղծիք սերմանել, սպառնալ եւ անել այն, ինչ արել են մինչեւ 2018-ի գարունը:

Իրականում, սակայն, իշխանութիւնները որեւէ մէկի պատերազմում ունեցած աւանդի համար չի դատում, աւելին, չեն ուրանում այն աստիճան, որ քրէական գործերով անցնող բազմաթիւ անձինք զուգահեռաբար հրաւիրուում են հանրային՝ նոյն պատերազմի ժամանակ իրենց արածների մասին հանրութեանը պատմելու: Թէեւ կարող էին վարուել այնպէս, ինչպէս հենց նախկիններն էին վարուում՝ իշխանութիւն եղած ժամանակ: Սրբագրել պատմութիւնը, Հանրայինում պահել զրաքննիչներին եւ թոյլ չտալ, որ եթերում անգամ մէկ կազր յայտուելի, որտեղ երեւում է նախկիններից որեւէ մէկը: Հիմա մենք նման բան չենք տեսնում, իսկ ահա մինչեւ 2018-ը տեսնում էինք:

Երբ ասում են. «Բա ասում էիք՝ սիրոյ եւ հանդուրժողականութեան միջնորդ, բայց ահա եկել ու սեւերի եւ սպիտակների էք

« Ի ԼՈՒՐ »

Հայաստանը Նոր Պլոյ է Ստեղծում. Թուրքիան կը Շրջափակուի՞

ՅԱԿՈԲ ԲԱՂԱԼԵԱՆ

Յունաստանում Փետրուարի 28-ին տեղի է ունեցել Հայաստանի, Յունաստանի, Կիպրոսի պաշտպանութեան նախարարութիւնների՝ պաշտպանական քաղաքականութեան բաժնի ղեկավարների մակարդակի հանդիպում, որի ընթացքում ստորագրուել է 2020 թուականի եռակողմ ռազմական գործակցութեան պլանը: Այն ենթադրում է համատեղ ռազմական միջոցառումներ, ռազմա-քաղաքական խորհրդակցութիւններ:

Եռակողմ համաձայնութեան ստորագրումը էական իրադարձութիւն է թէ ընդհանրապէս եռակողմ ձեւաչափի շրջանակում, որ 2019 թուականի Մարտին արտաքին գործերի նախարարների մակարդակով հաստատուեց Երեւանի նախաձեռնութեամբ, թէ այդ ձեւաչափի առաջին վեհաժողովի նախապատրաստման աշխատանքի շրջանակում, որ սպասուում է Երեւանում:

Եռակողմ ձեւաչափի նոր ռազմա-քաղաքական ուղղութեան ընդգծումը յատկանշական է միջազգային իրադրութեան, մասնաւորապէս շրջանում ուռւ-թուրքական

դիմակայութեան ֆոնին, որ ծաւալուում է Իդրիբի շուրջ, բայց անշուշտ պարունակում է առաւել լայն աշխարհաքաղաքական նշանակութիւն:

Թուրքիան ու Ռուսաստանը, որ նախորդ տարիներին խոստովանում էին եղբայրութիւնը Պուտինի եւ էրդողանի մակարդակով, ներկայումս գրեթէ նոյն մակարդակով միմիանց ներկայացնում են պահանջներ, սպառնալիք, ռազմական գործողութիւններ իրականացնում Իդրիբում: Մոսկուան առաջժամ կարծես թէ բաւական ամուր է կանգնած թուրքական շանտաժին դիմակայելու հարցում: Էրդողանն էլ սպառնում է 25 միլիոն մահմետական բնակչութեամբ Ռուսաստանը քանդել ներսից:

Անկասկած է, որ իրավիճակը մի կողմից միջազգային անվտանգային համակարգերի տրանսֆորմացիայի ազդեցութիւնն է, միւս կողմից էական ազդեցութիւն է թողնելու միջազգային անվտանգութեան նոր ճարտարապետութեան վրայ, այդ թւում թէ կողմկասեան ռեգիոնում, եւ թէ ընդհանրապէս թուրքիայի շուրջ ուղեծրում, ինչը ենթադրում է թէ

մերձաւորարեւելեան, թէ եւրաստլանտեան արեալի ներառում:

Ահա այդ առումով, Հայաստանի նախաձեռնած եռակողմ ձեւաչափի նոր ռազմական «յայտը» եւ դրա ռազմա-քաղաքականացումը ստանում է առանձնայատուկ նշանակութիւն եւ իմաստ, հաշուի առնելով, որ խօսքը երկրների մասին է, որոնց մի մասը՝ մէկը դէ իւրէ, միւսը՝ դէ ֆակտո՝ ՆԱՏՕ անդամ են, մեկը՝ ՀԱՊԿ անդամ: Եռակողմ այս ձեւաչափը կարող է լինել ռազմա-քաղաքական միջազգային անվտանգային հետաքրքիր առաջարկ:

Յունաստանում եռակողմ համաձայնագրի ստորագրումը տեղի է ունեցել Հայաստան Վրաստանի պաշտպանութեան նախարարի այցի զուգահեռ: Վրաստանը ռուս-թուրքական ռազմա-քաղաքական «արեալում» առանց քայլին սուբիեկտ է, երկու մայրաքաղաքներում՝ Անկարայում եւ Մոսկվայում «օբյեկտային» դիտարկումով: Վրաստանի համար աւելի ու աւելի արդիական է դառնալու «սուբիեկտային փնտռուքը», եւ այդ իմաստով թբիլիսին կարող է լինել Հայաստան, Կիպրոս, Յունաստան եռակողմ ձեւաչափի առաջին «սպառող», ներգրաւուածութեան հարցի լրջագոյն դիտարկման տեսանկիւնից:

« ԼՐԱԳԻՐ »



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԳՆՉԱՎԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՅԷ ԱՏԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Փաշինեան.-«Մեր Քաղաքական Խումբը Կը Կտրէ Չեռքերը, Բայց Մէկ Քուէաթերթիկի Կեղծիք Թոյլ Չի Տար»



Նիկոլ Փաշինեան ելոյթ կ'ունենայ «Այո»-ի դրամահաւաքի ընթացքին

Իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութիւնը «Այո»-ի աշխույժ քարոզչութիւնը պիտի սկսի յաջորդ շաբաթէն, իսկ Փետրուար 25-ին նախընտրական շտապի քարոզարշաւի ծախսերու համար նախատեսուած դրամահաւաք-երեկոն էր: Լրատուամիջոցներու համար այն փակ էր, միջոցառումն ուղիղ կը հեռարձակուէր «Այո»-ի ֆեյսպուքեան էջով: Ելոյթ ունեցան վարչապետն ու Ազգային ժողովի նախագահը:

«Հայաստանի Հանրապետութիւնում այս պահին գործող Սահմանադրական դատարանը որեւէ կապ չունի Հայաստանի ժողովրդի հետ, որեւէ իշխանութիւն չունի ստացած Հայաստանի ժողովրդից եւ վայելում է Հայաստանի ժողովրդի, հայ ժողովրդի բացարձակ մեծամասնութեան բացարձակ անվտանգութիւնը», - յայտարարած է Նիկոլ Փաշինեանը:

Սահմանադրական դատարանը այսօր չի ներկայացնում ժողովուրդը, եւ եկեր է այդ հիմնարկը կայացնելու ժամանակը, շարունակած է վարչապետը: «Որովհետեւ չփոխել էս հիմնարկը՝ նշանակում է առաջնորդուել այն կարգախօսով, կը ներէք, էդ տղամարդկանց շատ յատուկ հակում ա մէկն ինչը համեմատել մեքենաների, կամ մէկն ինչ ընկալել մեքենաների լեզուով, դա նոյնն է, թէ հաւատալ այն բանին, որ կարելի է ունենալ Տ դասի «Մերսես» եւ նրանով առաջ շարժուել, երբ որ նրա վրայ տեղադրուած են «Մոսկվիչ-408»-

ի անուղղողներ», - ըսած է Փաշինեանը:

Նիկոլ Փաշինեանը չէ շրջանցած ընտրակեղծարարութեան վերաբերեալ խօսակցութիւնները: Երաշխաւորած է՝ մէկ քուէաթերթիկի կեղծիք անգամ թոյլ պիտի չտան: «Այս քաղաքական խումբը կը կտրի սեփական ձեռքերը, բայց մի քուէաթերթիկի ընտրակեղծիք թոյլ չի տայ, մի քուէաթերթիկի: Ես անձամբ կը կտրեմ իմ երկու ձեռքերը, բայց մի քուէաթերթիկի կեղծիք թոյլ չեմ տայ, որովհետեւ հակառակ դէպքում դա կը նշանակի ջնջել մեր ապրած ամբողջ կեանքը, այն բոլոր արժէքները, որի վրայ մենք կանգնած ենք», - յայտարարած է վարչապետը:

Չի կրնար անկախ ու անաչառ ըլլալ Սահմանադրական դատարան մը, որ ձեւաւորուած է Սահմանադրութեան ոգիի ուղղակի խախտմամբ, իր ելոյթին մէջ նշած է խորհրդարանի ղեկավար Արարատ Միրզոյեանը:

«Միւրեքի քաղաքացիներ, հանրաքուէին «այո» ասելով՝ դուք կը յայտնէք ձեր համաձայնութիւնը առ այն, որ Սահմանադրական դատարանի դատաւորները չլինեն քաղաքական ուժերի ու հոսանքների ազդեցութիւնների կողմ, նրանց շահերի պաշտպան եւ այս առումով՝ քաղաքական, կուսակցական գործընթացների մաս», - յայտարարած է Միրզոյեանը:

Դրամահաւաք-երեկոյի արդիւնքով հանգանակուած է 205 միլիոն 560 հազար դրամ:

Իշխանութիւններուն Համար Բաւականին Դժուար Պիտի Ըլլայ 650 Հազար «Այո» Ձայն Ապահովելը

«Իրանը մեզ բարեկամ երկիր է, բայց տուեալ պարագայում Հայաստանի անվտանգութիւնը նոյնպէս շատ կարեւոր է, եւ սահմանն ուղեւորահոսքերի համար փակելը թերեւս ամէնաճիշտ որոշումն էր», - «Ա1+»-ի հետ զրոյցի ժամանակ ըսած է Միջազգային եւ անվտանգութեան հարցերու հայկական հիմնարկի փորձագէտ, քաղաքագէտ, իրանագէտ Արմէն Վարդանեանը՝ անդրադառնալով իրանի մէջ «քորոնա» ժահրի տարածման կապակցութեամբ ՀՀ իշխանութիւններու գործողութիւններուն:

Խօսելով Ապրիլ 5-ին կայանալիք հանրաքուէի մասին՝ քաղաքագէտը նշած է, որ իշխանութիւններուն համար բաւականին դժուար պիտի ըլլայ 650 հազար «այո» ձայն ապահովելը:

«Մի քանի պատճառներով. նախ էյֆորիան ընկել է, յետ չեղափոխական վիճակին բնորոշ էյֆորիան: Երկրորդ արտագնայ աշխատանքների շրջանն շուտով սկսուած. Մարտ-Ապրիլին բազմաթիւ մարդիկ գնում են արտասահման արտագնայ աշխատանքների», - պարզաբանած է ան:

Հարցին, թէ ինչպէ՞ս կ'արձագանգէ Եւրոպական Խորհուրդի Խորհրդարանական Վեհաժողովը, եթէ դադարեցուն Սահմանադրական դատարանի 7 դատաւորներու լիազօրութիւնները, Վարդանեան ըսած է, որ կրնայ՝ ԵՄԽՎ գարնանային նստաշրջանին հարցը քննարկուելի, Հայաստանի հարցով



Քաղաքագետ, իրանագետ Արմէն Վարդանեան

համագեղուցողները գեկոյցներ ունենալ. «Բացի դրանից, հնարաւոր է, որ ՄԴ 7 անդամները դիմեն Մարդու իրաւունքների եւրոպական դատարան: Այստեղ էլ մէկ այլ խնդիր կարող է առաջանալ Հայաստանի համար»:

Իսկ եթէ հանրաքուէի արդիւնքներով «ոչ»-ը յաղթէ, քաղաքագէտն ըսած է. «Ես կարծում եմ՝ իշխանութիւններն այդ դէպքում կ'ընդունեն Սահմանադրական դատարանի օրինակաւորութիւնը: Մանաւանդ, որ իրենք անընդատ չալտարարում են, որ ժողովրդի կամքն իրենց համար ամենամեծ բանն է: Եւ կարծում եմ՝ դրանից յետոյ Սահմանադրական դատարանի հարցն առժամանակ կը փակուի»:

Սէյրան Օհանեանը Կը Կասկածուի Առանձնապէս Խոշոր Չափերու Վատնում Կատարելու Մէջ

Պաշտպանութեան նախկին նախարար Սէյրան Օհանեանը Յատուկ քննչական ծառայութեան (ՅՔԾ) կողմէ քննուող քրէական գործի շրջածիրէն ներս որպէս կասկածեալ ներգրաւուած է առանձնապէս խոշոր չափերու՝ 1 միլիարդ 46 միլիոն 400 (մօտ 2,5 միլիոն տոլար) հազար դրամ արժողութեամբ գոյքի վատնում կատարելու կասկածանքով:

Քրէական գործով ձեռք բերուած փաստական տուեալներու համաձայն՝ 2010 թուականի ընթացքին Պաշտպանութեան նախարարութեան կողմէ մշակուած կառավարութեան գաղտնի որոշման նախագծով, առանց օրէնքի շարք մը պահանջներու պահպանման, մասնաւորապէս՝ առանց գոյքի պարտադիր գնահատման, առաջարկուած է թոյլատրել ՊՆ-ին՝ որպէս «Չորա Հէկ» ընկերութիւն պետական սեփականութիւն հանդիսացող բաժնետոմսերու փաթեթի կառավարման լիազօրութիւններն իրականացնող մարմնի, հաւանութիւն տալ 3 միլիարդ 600 միլիոն դրամ գումարով ընկերութեան գոյքի օտարման «Չորագետ Հիտրօ» ՍՊ ընկերութեան:

«Անուհետեւ ՀՀ պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեանի անունից 2010 թուականի Դեկտեմբերի 16-ին կազմուել է ՀՀ կառավարութեան որոշման նախագծի առաջման վերաբերեալ գաղտնի գրութիւն, որը Սէյրան Օհանեանի յանձնարարութեամբ նոյն օրն ուղարկուել է



Պաշտպանութեան նախկին նախարար Սէյրան Օհանեան

ՀՀ կառավարութեան աշխատակազմ:

Որոշման նախագիծը գաղտնի ընթացակարգով քննարկուել է ՀՀ կառավարութեան նիստում եւ 16.12.2010-ին ընդունուած որոշման հիման վրայ կնքուած գոյքի առուվաճառքի պայմանագրով «Չորա Հէկ» ընկերութեան՝ պետական սեփականութիւն հանդիսացող, պարտադիր գնահատման ենթակայ՝ 4,646,400,000 ՀՀ դրամ շուկայական արժէքով ողջ գոյքը, առանց պատշաճ գնահատման միջոցով շուկայական արժէքի սահմանման, «Չորագետ Հիտրօ» ընկերութեանն է իրացուել իրական արժէքից 1,046,400,000 ՀՀ դրամ պակաս գումարով», - կը տեղեկացնեն ՅՔԾ-էն:

Դատաւորը Մերժեց Մերժ Սարգսեանի Փաստաբանի Միջնորդութիւնը

Մերժ Սարգսեանի եւ միւսներու գործով դատաւոր Վահէ Միսաքեանը հրապարակեց մեղադրող դատախազին յայտնած բացարկի միջնորդութեան վերաբերեալ դատարանի որոշումը: Դատարանը որոշեց մերժել դատախազին յայտնած բացարկի միջնորդութիւնը:

Նշենք, որ Մերժ Սարգսեանի փաստաբան Ռուբէն Յակոբեանը դատական նիստին բացարկի միջնորդութիւն ներկայացուցած էր մեղադրող դատախազ Արսէն Մարտիրոսեանին՝ պատճառաբանելով, որ դատախազն այս գործով կողմնակալ վերաբերմունք կցուցաբերէ:

Նշենք, որ այս գործով Մերժ Սարգսեանին մեղադրանք առա-

ջադրուած է այն բանի համար, որ ան 2008 թուականի Ապրիլ 9-էն մինչեւ 2018-ի Ապրիլ 9-ը ինկած ժամանակահատուածին, զբաղեցնելով ՀՀ նախագահի պաշտօնը, հանդիսանալով մշտապէս իշխանութեան ներկայացուցիչի գործառույթներ իրականացնող պաշտօնատար անձ, իր պաշտօնէական դիրքն օգտագործելով, 2013-ի Յունուար 25-էն մինչեւ նոյն թուականի Փետրուար 7-ն ինկած ժամանակահատուածին, կազմակերպած է պաշտօնատար խումբ մը անձանց կողմէ պետութեան վատնելու եղանակով առանձնապէս խոշոր չափերով գումարի՝ 489,160,310 ՀՀ դրամի յափշտակութեան կատարում:

ԼՈՒՐԵՐ

Հայաստանի Եւ Արցախի Առաջնորդները Յարգանքի Տուրք Մատուցեցին Սուևկայիթի Զոհերու Յիշատակին



Նիկոլ Փաշինեան եւ Գարեգին Բ. կաթողիկոսը՝ Սուևկայիթ ջարդերու տարելիցին առթիւ կ'այցելեն Ծիծեռնակաբերդի յուշահամալիր

1988 թուականի Փետրուար 27-29-ին Ատրպէյճանի Սուևկայիթ քաղաքին մէջ գործադրուած հայերու ջարդերու 32-րդ տարելիցի կապակցութեամբ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանը եւ Գարեգին երկրորդ Ամենայն Հայոց կաթողիկոսը, բարձրաստիճան պաշտօնեաներ եւ հոգեւորականներ այցելած են Ծիծեռնակաբերդի յուշահամալիր, յարգանքի տուրք մատուցելու ոճրագործութեան զոհերու յիշատակին:

Վարչապետի տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապերու վարչութեան հաղորդագրութեան համաձայն՝ պետութեան ղեկավարը ծաղկեպսակ դրած է եւ ծաղիկներ խոնարհած է զոհերու յիշատակը յաւերժացնող յուշարձաններուն:

Մայր Աթոռի տեղեկատուական համակարգի փոխանցմամբ՝

ծաղկեպսակներու գետեղման պաշտօնական արարողութենէն ետք Վեհափառ միւս հոգեւորականներու հետ աղօթք բարձրացուցած է Սուևկայիթի մէջ զոհուածներու հոգիներու հանգստութեան համար, ապա ծաղիկներ դրած անոնց յիշատակին տեղադրուած խաչքարերուն առջեւ:

Սուևկայիթի ջարդերու 32-րդ տարելիցին առիթով՝ Արցախի Հանրապետութեան նախագահ Բակո Սահակեան, Փետրուար 28-ին, Հայ Առաքելական Եկեղեցւոյ Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսեանի եւ հանրապետութեան բարձրաստիճան ղեկավարութեան ուղեկցութեամբ այցելած է Ստեփանակերտի յուշահամալիր եւ ծաղիկներ դրած անմեղ զոհերու յիշատակը յաւերժացնող յուշակոթողին:

ԱԳՆ. Թուրքիան Զի Կրնար Ղարաբաղեան Գործընթացին Մէջ Որեւէ Դեր Ունենալ

Թուրքիան չի կրնար զարաբաղեան գործընթացին մէջ որեւէ դերակատարում ունենալ: Այս մասին յայտարարած է Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան խօսնակը. հակադարձելով Թուրքիոյ արտաքին գործոց նախարարի յայտարարութեան:

ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահներու հետ Թուրքիոյ արտաքին գործոց նախարարի հանդիպման վերաբերեալ հարցին, թէ ինչպէ՞ս կը գնահատէ Թուրքիոյ ներգրաւուածութիւնը զարաբաղեան գործընթացին, Աննա Նաղդալեանը, Արտաքին գործոց նախարարութեան լրատուութեան եւ հանրային դիւանագիտութեան վարչութեան փոխանցմամբ, արձագանգած է. - «Արդէն իսկ եղել է ՀՀ ԱԳ նախարարի համապատասխան անդրադարձը: Յաւելնք, որ Հայաստանի եւ հայ ժողովրդի նկատմամբ ոչ բարեկամական քաղաքականութեամբ, որը Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան ծիրից ներս արտայայտուած է նաեւ Ատրպէյճանին ցուցաբերուող միակողմանի ռազմաքաղաքական աջակցութեամբ, Թուրքիան չի կարող ԼՂ հիմնախնդրի խաղաղ կարգաւորման գործընթացում որեւէ դերակատարում ունենալ»:

Նախօրէին համանախագահներու հետ հանդիպման ժամանակ



ՀՀ ԱԳ նախարարի խօսնակ Աննա Նաղդալեան

Մեւ լուծ Չաւուշօղլուն անոնց կոչըրած էր աշխոյժացնելու զարաբաղեան հակամարտութեան լուծմանն ուղղուած ջանքերը:

«ԵԱՀԿ Մինսքի խումբը Լեւոնային Ղարաբաղի խնդրի լուծման ուղղութեամբ պէտք է աւելի արդիւնաւէտ գործի: Այդ լուծումը պէտք է ամբողջութեամբ համապատասխանի Ատրպէյճանի ինքնիշխանութեան, տարածքային ամբողջականութեան սկզբունքներին եւ այդ երկրի միջազգայնորէն ճանաչուած սահմաններին», - յայտարարած էր Թուրքիոյ արտաքին քաղաքական գերատեսչութեան ղեկավարը:

Փաշինեան. «ՀՀ-ն Զի Կրնար Սպառնալիք Ըլլալ Վրաստանի Համար, Իսկ Վերջինս Ալ՝ Հայաստանի»



Հայաստանի եւ Վրաստանի վարչապետները՝ Նիկոլ Փաշինեան եւ Կիրիլ Կախարիա Թիֆլիսի մէջ կայացած հանդիպումի ընթացքին

Երեքշաբթի, Մարտ 3-ին Վրաստանի կառավարութենէն ներս տեղի ունեցած են վարչապետ Նիկոլ Փաշինեանի դիմաւորման պաշտօնական արարողութիւնը, որուն յաջորդած է երկու երկիրներու վարչապետերու առանձնազրոյցը:

Ինչպէս կը յայտնեն Հայաստանի վարչապետի աշխատակազմէն, Վրաստանի վարչապետ Կիրիլի Կախարիան աւելցուցած է, որ Հայաստանն ու Վրաստանը կ'ապրին բարդ տարածաշրջանի մէջ, եւ երկու երկիրները կը հասկնան, որ տարածաշրջանային կայունութիւնը պետութիւններու զարգացման հիմքն է:

«Մենք նախ պէտք է հոգ տանինք մեր երկիրներու խաղաղութեան, ապա քաղաքական, տնտեսական, մշակութային հարցերու մասին», - ըսած է Վրաստանի վարչապետը:

Նիկոլ Փաշինեանը նշած է. ժամանակն է մտածել այս տարածաշրջանին մէջ եթէ ոչ հազարամեակներու, ապա հարիւրամեակներու համատեղ զարգացման մասին. - «Ըսածս ուղղակի գեղեցիկ ձեւակերպում չէ, այլ Վրաստանի հետ յարաբերութիւններու մեր պատկերացումներն ունին ռազմավարական բնոյթ: Մեր երկիրներն ունին աւելի լայն համագործակցութիւն ե՛ւ ընդհանուր, ե՛ւ տարբերակուող, բայց տարածաշրջանային մեր յարաբերութիւնները մենք բոլորովին այլ հարթութեան վրայ կը դիտարկենք: Հայ-վրա-

ցական յարաբերութիւններն ամբողջով եւս մէկ գործօն, նուիրուածութիւնն է ժողովրդավարական արժէքներուն: Այս հանգամանքը եւս կարեւոր անկիւնաքար մըն է»:

Այնուհետեւ Նիկոլ Փաշինեանը եւ Կիրիլի Կախարիան բանակցութիւնները շարունակած են ընդլայնուած կազմով: ՀՀ կառավարութեան ղեկավարի կարծիքով՝ երկու երկիրներու գործադիր մարմիններն այստեղ ունին բազմաթիւ հնարաւորութիւններ՝ տնտեսական համագործակցութիւնը դուրս բերելու բոլորովին նոր մակարդակի. - «Այդ առումով նոյնպէս ժողովրդավարութիւնը հականշանակութիւն ունի, որովհետեւ իմ պատկերացմամբ, եթէ մարդիկ Հայաստանը եւ Վրաստանն ընկալեն որպէս ժողովրդավարական տարածք՝ մեր երկիրներու ներդրումային գրաւչութիւնը կը մեծնայ: Մենք յարգանքով կը վերաբերինք Վրաստանի եւ Եւրասիական թեան տարածքին ընդելուզուելու ձգտումներուն: Այնպէս դասաւորուած է, որ մեր երկիրներն անվտանգութեան համակարգերու վերաբերեալ տարբեր պատկերացումներ ունին, բայց իմ կարծիքով, մենք մեր անվտանգութեան մասին ունինք ընդհանուր պատկերացում: Հայաստանը չի կրնար անվտանգային սպառնալիք ըլլալ Վրաստանի համար, իսկ Վրաստանը չի կրնար սպառնալիք ըլլալ Հայաստանի համար:

Գերմանիայէն եւ Ֆրանսայէն Դէպի Հայաստան Զբօսաշրջիկներու Թիւը Աճ Արձանագրած Է

Հայաստանի Հանրապետութեան մէջ 2019 թուականին գրանցուած է 4.3 միլիոն ընդհանուր եւ 1.9 միլիոն զբօսաշրջային այցելութիւններ:

«Արմէնբրես»-ի հաղորդմամբ՝ այս մասին լրագրողներու հետ հանդիպման ժամանակ ըսած է ՀՀ տնտեսութեան նախարարութեան զբօսաշրջութեան կոմիտէի նախագահ Սուսաննա Սաֆարեանը:

«2019 թուականին գրանցել ենք 4.3 միլիոն ընդհանուր այցելութիւն, որը 14,9 տոկոսով աւելի է, քան 2018 թ. ցուցանիշը: Նախորդ տարի գրանցել ենք մօտ 1.9 միլիոն զբօսաշրջային այցելութիւն, որը



2018-ի համեմատ 14,7 տոկոսով աւելի էր: Հիմնական շուկաներում այս տարի ունեցել ենք որոշակի փոփոխութիւններ: Կրկին շուկաները գլխաւորում են Ռուսաստանը, Վրաստանը, Իրան

Գլխավոր Հիւպատոս Տօթթ. Արմէն Բայրուրդեան Ելոյթ Պիտի Ունենայ Փաստօրոյնայի Մէջ

Ս.Գ. Հնչակեան Կուսակցութեան Արտաքին Յարաբերութիւններու Դիւանի կազմակերպութեամբ Հինգշաբթի, Մարտ 19-ին տեղի պիտի ունենայ դասախօսական երեկոյ մը՝ «Հայաստանը վերափոխման ճանապարհին» խորագրով, ուր ելոյթ պիտի ունենայ ՀՀ գլխավոր հիւպատոս Տօթթ. Արմէն Բայրուրդեան:



ՀՀ գլխավոր հիւպատոս Տօթթ. Արմէն Բայրուրդեան

Տօթթ. Բայրուրդեան ծնած է Երեւան եւ Հայաստանի գլխավոր հիւպատոսի պաշտօնը կը վարէ Լոս Անճէլոսի մէջ Սեպտեմբեր 2018-էն ի վեր: Փետրուար 1991-էն ետք ան միացած է նորանկախ Հայաստանի պետական ծառայութեան բազմաթիւ պաշտօններ վարելով Արտաքին Գործոց Նախարարութեան համակարգէն ներս:

Սոյն հրապարակային դասախօսութեան ընթացքին Տօթթ. Բայրուրդեան պիտի ներկայացնէ Հայաստանի մէջ տիրող վերջին իրադարձութիւնները, Հայաստանի ներքին քաղաքական հարցերը եւ զարգացումները եւ թաւաշէջ յեղափոխութեանն էտք Հայաստանի մէջ տեղի ունեցած բարեկարգումները, ինչպէս նաեւ Հայաստանի Սահմանադրական դատարանի շուրջ ստեղծուած իրավիճակը:

Գիտակցելով որ ներկայիս

«Ֆէյք» կամ կեղծ լուրերը շատ են, վստահաբար մենք ճիշդ աղբիւրէն պիտի լսենք հայրենիքի մէջ տեղի ունեցող զարգացումները:

Շրջանի Հայութիւնը հրաւիրուած է ներկայ գտնուելու սոյն կարեւոր միջոցառումին ու լսելու ՀՀ գլխավոր հիւպատոս Տօթթ. Արմէն Բայրուրդեանը:

Հանդիպումի վայր՝ Փաստօրոյնայի Հ.Կ.Մ. կեդրոն, Հինգշաբթի, Մարտ 19, 2020, երեկոյեան ժամը 8:00-ին, 1060 N Allen Ave. Pasadena, CA, 91104

Հնդկաստանը Հայաստանին Ռատիօտեղորոշիչ 4 Swathi Ռատարային Համակարգ Պիտի Մատակարարէ



Հնդկաստանը Հայաստանին ռատիօտեղորոշիչ 4 Swathi ռատիօտեղակայանք (radar) համակարգ մատակարարելու 40 միլիոն տոլար արժողութեամբ գործարք կնքած է: Հնդկաստանը յայտարարուած մրցոյթին յաղթած է Ռուսիոյ եւ Լեհաստանին: «Արմէնբրես»-ի հաղորդմամբ՝ այս մասին կը հաղորդեն հնդկական լրատուամիջոցները:

Timesnownews.com կայքը, յղում ընելով Հնդկաստանի կառավարութեան իր աղբիւրներուն, գրած է, որ ռատիօտեղակայանքային համակարգը մշակուած է Պետական պաշտպանական հետազօտութիւններու եւ զարգացման կազմակերպութեան ելեկտրոնային-

թեան եւ ռատիօտեղակայանքներու զարգացման հիմնադրամի Պանկալորի (Պենկալորու) տարրալուծարանի կողմէ եւ արտադրուած է «Bharat Electronics Limited (BEL)»-ի կողմէ: Կայքի տեղեկութիւններով՝ Հնդկաստանը արդէն սկսած է ռատիօտեղակայանքային համակարգի մատակարարումը Հայաստանին:

Business Today ի հերթին կը տեղեկացնէ, որ Հայաստան մանրամասն փորձարկած է նաեւ Ռուսիոյ եւ Լեհաստանի առաջարկուած համակարգերը, սակայն յետոյ ընտրած է հնդկականը:

ՀՀ պաշտպանութեան նախարարութիւնը, սակայն, առայժմ չի մեկնաբաներ այս տեղեկութիւնը:

Մայր Աթոռը կը Յայտարարէ Մայր Տաճարի Համար Համահայկական Հանգանակութիւն



Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը կը յայտարարէ համազգային հանգանակութիւն ի նպաստ Մայր Տաճարի հիմնանորոգութեան եւ բարեգործութեան: Այս մասին կը յայտնեն Մայր Աթոռ Ս. Էջմիածինէն:

Սուրբ Էջմիածինի Մայր Տաճարի հրատապ ամրակայման եւ հիմնանորոգութեան աշխատանքները սկսած են 2017-ին՝ գերծպահելու համայն հայութեան նուիրական սրբավայրը հնարաւոր փլուզման վտանգէ: Մայր Տաճարի վերջին ամրակայման կատարուած է 1950-60-ական թուականներուն եւ կրած է մասնակի բնոյթ: Միածնաէջ Տաճարի պահպանման եւ ամրացման առումով ասիկա վերջին հարկւրամեակներուն կատարուող մեծագոյն հիմնանորոգութիւնն է, որ կը պահանջէ նաեւ աշխարհի բոլոր ծագերուն բնակող մեր ժողովուրդի զաւակներուն անմիջական մասնակցութիւնը:

Այս կապակցութեամբ 2019 Յունիս 23-ին՝ Կաթողիկէ Սուրբ

Էջմիածնի տօնին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբրիէն Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը սրբատառ կոնդակով համայն հայութեան ուղղած է Սուրբ Գրիգոր Լուսաւորիչի «Եկէ՛ք կառուցենք լոյսի Սուրբ Խորանը» կոչը:

Մայր Տաճարի նորոգութեան համար նուիրաբերուող օգնութիւնները համակարգելու նպատակով ստեղծուած են հոգաբարձուներու պատուոյ յանձնախումբ եւ գործադիր մարմին: Հաստատուած է նաեւ աշխատանքային խումբ՝ ԱՄՆ Հայոց Արեւմտեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան Արք. Տէր-տէրեանի գլխավորութեամբ: Սփիւռքի տարբեր թեմերու եւ համայնքներու մէջ ձեւաւորուած են տեղական յանձնախումբեր:

Այսօր հայութեան Սրբութիւն սրբոցը՝ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարը, կարիք ունի իր իւրաքանչիւր զաւակի օժանդակութեան, որպէսզի շարունակէ իր յաւիտենական առաքելութիւնը մեր ժողովուրդի կեանքին մէջ:

Դեմոկրատ Կուսակցութիւնը

Շարունակուած էջ 1-էն

որոնց շնորհիւ ան հասաւ յաղթանակներու՝ առաջին երեք նահանգներուն մէջ: Շատեր սկսած էին Սենտրոյի վերջնական յաղթանակը նկատել անխուսափելի:

Անցեալ Շաբաթ օր, երբ ընտրութիւնները հասան Հարաւային Գարոլայնա, ուր Դեմոկրատ ընտրողներու 60 տոկոսը սեւամորթ Ամերիկացիներ էին, ամէն ինչ շրջեցաւ: Այդ նահանգի ընտրողները խուռներամ եկան Պայտընի աջակցութեան, որպէս Ամերիկայի առաջին սեւամորթ նախագահ՝ Պարաք Օպամայի փոխ նախագահը: Հոն արձանագրուած մեծ յաջողութեանն ու շարք մը այլ թեկնածուներու՝ ի նպաստ Պայտընի ընտրապայքարէն դուրս գալէն ետք, ամէն ինչ անակնկալօրէն փոխուեցաւ: Մարտ 3-ին ան ար-

ձանագրեց անսպասելի արդիւնքներ գրեթէ բոլոր նահանգներու մէջ ու դարձաւ ընտրարշաւի յառաջատարը: Այսպիսով վերականգնուեցաւ նաեւ Դեմոկրատ ընտրողներու մօտ այն համոզումը եւ վստահութիւնը, որ Պայտըն ունի ամենէն մեծ հաւանականութիւնը՝ պարտութեան մատնելու Տանոլտ Ռոմսփը, բան մը որ առաջնաերթութիւն է անոնց համար:

Ընտրապայքարի մնացեալ օրերուն սուր պայքար կը սպասուի Պայտընի եւ Սենտրոյի միջեւ: Տակաւին կան 33 նահանգներ, որոնք եւս պիտի ըսեն իրենց խօսքը: Սակայն, պատմութիւնը կը յուշէ որ, այս հանգրուանի առաջ անցնող թեկնածուն ընդհանրապէս ինքն է, որ կը դառնայ կուսակցութեան դրօշակակիրը՝ Նոյնմբերի ընտրութիւններուն:

«ՄԱՍԻՍ»

Հայաստան Եւ Արցախ

Շարունակուած էջ 1-էն

կան տեղաշարժերը նկատելի են Հայաստանի եւ Ուքրանիայի մէջ, ըստ Freedom House-ի: Նոր առաջնորդները, որոնք իշխանութեան եկած են համակարգային բարեփոխումներու խոստումներով, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանը, Ուքրանիայի նախագահ՝ Վլատիմիր Զելենսքին եւ Մոլտովիայի՝ Մայա Սանտուն, առաջին քայլերը նախաձեռնած են կաշառակեր ուժերուն արմատախիլ ընե-

լու ուղղութեամբ, որոնք կը խոչընդոտէին իրենց երկիրներու ժողովրդավարական ձգտումները:

Զեկոյցը չէ շրջանցած Ատրպէյճանի մէջ իշխանութիւններու կոշտ ճնշումներով տեղի ունեցած ներքաղաքական իրադարձութիւնները, ինչպէս ընդդիմադիր կուսակցութիւններու, գործիչներու, արքեպիսկոպոստի, լրագրողներու, կանանց իրաւունքներու պաշտպաններու, արուեստագէտներու նկատմամբ հաշուհարգարի տեսակները, որոնք կը գործադրէ Ալիեւի համակարգը:

2եր Ծանուցումները Կտահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին Tel: (626) 797-7680 massis2@earthlink.net

Ալեն Սիմոնեան Մոնթեվիտեո Մեջ Մասնակցած Է Ուրուկուայի Նոր Նախագահի Երդմնակալության



Ուրուկուայի նոր նախագահ Լուիս Լաբալե ֆոուր երդման եւ պաշտօնի ստանձնման արարողութիւններուն մասնակցելու նպատակով Մոնթեվիտեո ժամանած է Հայաստանի Ազգային ժողովի փոխնախագահ Ալեն Սիմոնեանը:

Հայ համայնքի հետ հանդիպման ընթացքին Սիմոնեանը տեղեկացուցած է, որ երբ դեսպան էսթերա Մկրտումեանի հետ միասին ողջունած են նոր նախագահը, Լուիս Լաբալե ֆոուր մասնաւորապէս ըսած է. - «Արդէն ունինք իննգ տարի աշխատելու համար, որպէսզի ես դառնամ Ուրուկուայի առաջին նախագահը, որ կ'ացնել

Հայաստան»:

46-ամեայ Լուիս Լաբալե ֆոուր Ուրուկուայի նախագահ ընտրուած է անցած տարուան Նոյեմբերին: Ան աւանդական Ազգային կուսակցութեան առաջնորդներէն է, սակայն անոր թեկնածութիւնը պաշտպանած են 5 քաղաքական ուժեր՝ աջակողմեան «Բազմազոյն դաշինքի» շրջագիծէն ներս:

Լուիս Լաբալե ֆոուր հայրը նախագահ եղած է 1990-1995 թուականներուն, եւ անոր օրօք Ուրուկուայն ու Հայաստանը հաստատած են դիւանագիտական յարաբերութիւններ:

ՀՀ Իսրայէլի Դեսպանատունը Պիտի Բացուի Թէլ Աւիվ Մեջ

Իսրայէլի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպանի նստավայրը տեղափոխուած է Թէլ Աւիւ: ՀՀ նախագահ Արմէն Սմբատեանը իսրայէլի մէջ ՀՀ դեսպան նշանակելու հրամանագիրին մէջ ստորագրած է փոփոխութիւններու հրամանագիր, որու մէջ կ'արձանագրուի, որ Իսրայէլի մէջ ՀՀ դեսպանի նստավայրը Երեւանէն կը տեղափոխուի Թէլ Աւիւ:

«Հիմք ընդունելով վարչապետի առաջարկը՝ համաձայն Սահմանադրութեան 139-րդ յօդուածի 1-ին մասի, ինչպէս նաեւ «Նորմաթիւ իրաւական օրէնքներու մասին» օրէնքի 34-րդ յօդուածի. Հայաստանի Հանրապետութեան Նախագահի 2018 թուականի 31 Մարտի «Ա. Սմբատեանը իսրայէլի Պետու-



թեան մէջ Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան նշանակելու մասին» ՆՀ-200-Ա հրամանագրին մէջ «(նստավայրը՝ Երեւան)» բառերը փոխա-

Երեւանեան Պատմամշակութային Նշանակութեան Շէնքը Վաճառուած Է Օֆշորային Ընկերութեան Մը



Երեւանի Աբովեան 3 հասցէի վրայ գտնուող պատմամշակութային նշանակութեան շէնքը վաճառուած է օֆշորային ընկերութեան, կը յայտնէ ոստիկանութիւնը:

2001 թուականին Անշարժ գոյքի քաթասորի պետական կոմիտէի «Կեդրոն» տարածքային ստորաբաժանման պաշտօնատար անձինք, կեղծիք կատարելով, շէնքը գրանցած են որպէս հասարակական կազմակերպութեան (ՀԿ) սեփականութիւն, որմէ ետք այդ ՀԿ խորհուրդի ղեկավարը, որ նաեւ Մշակոյթի նախարարութեան բարձրաստիճան պաշտօնատար անձ եղած է, անտեսելով, որ շէնքն ընդգրկուած է պատմամշակութային յուշարձաններու ցանկին մէջ, պաշտօնէական դիրքն օգտագործած է ծառայութեան շահերուն հակառակ:

2007-ին շէնքի եւ հողամասի մէկ հատուածը ՀԿ-ն 28 միլիոն 800 հազար դրամով օտարած է սահմանափակ պատասխանատուութեամբ ընկերութեան մը՝ խախտելով Երեւանի քաղաքապետի որոշման հիման վրայ կնքուած պայմանագրի դրոյթները, իսկ այդ ընկերութիւնն ալ իրականացուցած է պատ-

մամշակութային յուշարձանի քանդման աշխատանքները շէնքի հիւսիսային հատուածը քանդուած է, որոշ պատուհաններ լցափակուած են:

Հասարակական կազմակերպութեան նախագահի կողմէ 2012 թուականին ընկերութեան 100 տոկոս բաժնեմասը 550 հազար տոլարով ձեւական գործարքի հետեւանքով օտարուած է բրիտանական վիրձինեան կղզիներուն մէջ գրանցուած օֆշորային ընկերութիւններէն մէկուն, որուն տնօրէնը հանդիսացած է Մշակոյթի նախարարութեան նոյն բարձրաստիճան պաշտօնեացի որդիի կինը: Այնուհետեւ ձեւական գործարքներու միջոցով նշուած 100 տոկոս բաժնեմասի 50 տոկոսն անցած է հասարակական կազմակերպութեան նախագահին, 25 տոկոսը՝ յիշեալ ընկերութեան տնօրէնի մօր, իսկ միւս 25 տոկոսը մնացած է օֆշորային ընկերութեան:

Այս ապօրինութիւններու հետեւանքով պետութեան պատճառուած է առանձնապէս խոշոր չափերու՝ 201 միլիոն դրամի վնաս: Յարուցուած է քրէական գործ, որ ուղարկուած է Քննչական կոմիտէ:

րինել «(նստավայրը՝ Թէլ Աւիւ)» բառերով», - ըսուած է նախագահի հրամանագրին մէջ:

Թէլ Աւիւի մէջ դեսպանութիւն հիմնելու որոշման ՀՀ կառավարութիւնը հաւանութիւն տուած էր 2019 Սեպտեմբերին:

Հայաստանի Հանրապետութեան եւ Իսրայէլի պետութեան միջեւ դիւանագիտական յարաբերութիւնները հաստատուած են 1992 Ապրիլին: 2018 Մարտին Իսրայէլի պետութեան մէջ ՀՀ դեսպանը Արմէն Սմբատեանն է:

Կազմակերպութեամբ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Արտաին Յարաբերութիւններու Դիւանի՝

ՀՐԱՊԱՐԱԿԱԹԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ելայք Կ'ունենայ Լոս Անճելոսի ՀՀ Գլխաւոր Հիւպատոս՝ **Տօֆ. Արմէն Բայբուրթեան**՝ Նիւ Իրք՝ «Հայաստանը Վերափոխման Ճանապարհին»

Տեղի կ'ունենայ **Հինգշաբթի 19 Մարտ, 2020** Երեկոյեան ժամը 8:00-ին

Ն. Կ. Բ. Մ.-ի Սրահին ներս 1060 N. ALLEN AVE, PASADENA, CA 91104

Մուտքը Ազատ Հիւրասիրութիւն

Hosted by S.D. Hunchakian Party Public Relations Committee

PUBLIC DISCUSSION

Guest Speaker
Consul General of the Republic of Armenia
Ambassador Armen Baibourtian, PhD

Topic Of Discussion:
“Armenia on the Road to Transformation”

The event will take place on
Thursday, March 19, 2020
at 8:00 pm

A.E.B.U. Hall
1060 N. ALLEN AVE, PASADENA, CA 91104

Open to Public Reception to follow

Քուէթի էմիրին Դուստրը Պատմած է Հայոց Ցեղասպանութենէն Վերապրած Իր Հայ Սեծնոր Մասին



ՀՀ վարչապետի տիկինը, «Իմ Քայլը» եւ «City of Smile/Ժպիտներու Քաղաք» բարեգործական հիմնադրամներու հոգաբարձուներու խորհուրդի նախագահ Աննա Յակոբեան, ՉՄարտին, կառավարական առանձնատան մէջ հիւրընկալած է Քուէթի 14-րդ էմիրի դուստր շէյխա Հեսսա Սատ Ապտուլլահ Սապահը:

Ջերմ մթնոլորտի մէջ, շէյխա Հեսսա Սատ Ապտուլլահ Սապահը պատմած է իր ծաւալած գործունէութեան, մասնաւորապէս, Արաբական Լիկայի հովանիին տակ գործող արաբ կին գործարարներու խորհուրդի (Arab Council of Businesswomen) մասին: Աննա Յակոբեան, իր հերթին, ներկայացուցած է իր ղեկավարած «Իմ Քայլը» եւ «City of Smile/Ժպիտներու Քաղաք» բարեգործական հիմնադրամներու գործունէութեան, ինչպէս նաեւ «Կանայք Յանուն Խաղաղութեան» արշաւին մասին: Ներկայացնելով արշաւի նպատակը՝ Յակոբեան շեշտած է, որ խաղաղութիւնը բացարձակ արժէք է, եւ եկած է այն պահը, որ կանայք պէտք է համախմբուին՝ յանուն խաղաղութեան:

Ջրօցի ընթացքին շէյխա Սատ պատմած է Հայաստան իր այցելութիւններուն մասին՝ շեշտելով, որ իւրաքանչիւր անգամ առանձնապատուկ ջերմութեամբ կ'այցելէ: Վերջինս պատմած է ազգութեամբ հայ մեծմօր՝ Եղիսաբէթի մասին, նշելով, որ Հայոց Ցեղասպանութեան ժամանակ Ձէյթունի մէջ ապրող իր մեծմայրը բռնած է գաղթի ճամբան եւ հասած է Տէր Զօրի անապատ, ուր հանդիպած է ապագայ ամուսինին՝ շէյխա Հեսսայի մեծհօր: Քուէթի 14-րդ էմիրի դուստրը պատմած է, որ հայուհի մեծմայրը իր կեանքին մէջ շատ մեծ դեր խաղցած, եւ անընդհատ մղած է զինք կրթուելու եւ պայքարելու նպատակներուն հասնելու համար:

Հանդիպման քննարկուած են համագործակցութեան շարք մը ուղղութիւններ, ձեռք բերուած՝ պայմանաւորուածութիւններ:

Քուէթի 14-րդ էմիրի դուստր շէյխա Հեսսա յաջողակ

գործարար է: Ան առաջին կինն է, որ Քուէթի մէջ հիմնադրած է սեփական գործը՝ այդ կերպով ոգեշնչելով բազմաթիւ արաբ կանանց: Ան կանանց իրաւունքներու աշխօժ պաշտպան է:

Մահացած է Յայտնի Յուշարձանագէտ Սամուէլ Կարապետեանը



Փետրուար 27-ին, 54 տարեկանին կեանքին հեռացած է հայ անուանի յուշարձանագէտ, պատմաբան, բանահաւաք, Հայկական ճարտարապետութիւնը ուսումնասիրող հիմնադրամի (ՀԾՈւՀ) երեւանեան գրասենեակի նախագահ Սամուէլ Կարապետեանը:

ԿԳՄՍ նախարար Արայիկ Յարութիւնեանի խօսքով՝ ապագային մենք դեռ շատ փաստեր կ'իմա-

նանք, որոնց մասին դեռ չենք գիտեր. «Այն ծաւալը, որ ինքը իրականացուցած է, վեր էր մարդկային կարողութիւններէն, այն դեռ երկար ժամանակ պիտի ամփոփենք, անոր մասին շատ պիտի գրուի»:

Երգահան, կատարելող Ռուբէն Հախվերտեանն ալ ըսած է, որ

Եր.Ս. Էջ 19

ARMENIAN EDUCATIONAL BENEVOLENT UNION
ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԲԱԵՐՍԻՐԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Cordially invites you to

Spring Brunch

Benefitting the
AEBU Scholarship Fund
Empowering Our Youth for a Brighter Future

Sunday
March 22, 2020
Starting at 10:30 am

AEBU CENTER
1060 North Allen Avenue
Pasadena, CA 91104

To Reserve your tickets please
Call 626•344•7321
or
Text 818•281•0351

Donation \$50

Լիբանան Ս.Դ.Հ.Կ. - Հ.Յ.Դ. - Ռ.Ա.Կ. Միջկուսակցական ժողով



Չորեքշաբթի, 26 Փետրուարին, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան Նոր Հաճնոյ գրասենեակին մէջ տեղի ունեցաւ միջկուսակցական հանդիպում մը՝ ՍԴՀԿ-ի, ՀՅԴ-ի եւ ՌԱԿ-ի միջեւ: Ներկայ էին ՍԴՀԿ-էն՝ ատենապետ Ընկ. Սեպուհ Գալփաքեան, Ընկ. Մարտիկ Ժամկոչեան, ՀՅԴ-էն՝ ներկայացուցիչ երեսփոխան Յակոբ Բագրատունի, Յակոբ Հաւաթեան, Մելիք Գարագաւորեան եւ ՌԱԿ-էն՝ ատենապետ Սեւակ Յակոբեան եւ Արմէն Վալէճեան:

Ժողովականները քննարկեցին լիբանանեան քաղաքական բեմին վրայ տեղի ունեցած վերջին զարգացումները, ստեղծուած տնտեսական ճգնաժամը, ինչպէս նաեւ լիբանանահայ յուսովեան առջեւ ծառայած կրթական, ընկերային եւ տնտեսական զանազան խնդիրներն ու տարաբնույթ խնդիրները: Քննարկելով քաղաքական օրակարգը, ժողովականները արդարացի համարեցին 17 Հոկտեմբերին ծայր առած ժողովրդային բողոքներն ու պոսթ-կոմունները, եւ նշեցին, որ տազնապէս դուրս գալու միջոցներ կը շարունակեն մնալ կողմերուն միջեւ երկխօսութիւնը, կառավարութեան կողմէ ուսումնասիրուած տնտեսական ծրագրերի մը գործադրութիւնը, ինչպէս նաեւ պետական համակարգին մէջ փոփոխութեան վերացումը եւ յափշտակուած գումարներու վերադարձը պետական գանձարկին՝ դատարանական անկախ համակարգի մը ստեղծումով: Ժողովականները շեշտեցին, որ Լիբանան հեռու պէտք է պահել արտաքին ամէն տեսակի միջամտութիւններէն եւ ապատեղեկատուութեան ու խեղաթիւրումներու վրայ հիմնուած խոնարհարարի մթնոլորտէն: Փաստը ցոյց տուած է, որ բեւեռացումը երբեք չի նպաստեր ներկայ առաջադրանքներու իրականացման, այլ ընդհակառակն, աւելի կը ծանրացնէ առկայ վատ կացութիւնը: Իսկ

ազգային օրակարգով, որպէսզի ստեղծուած տնտեսական տագնապը չունենայ սուր հետեւանքներ, կենսական նկատուեցաւ, որ համայնքի կազմակերպութիւնները եւ կառույցները առաւելագոյն դիւրութիւններ ընծայեն համայնքի զաւակներուն եւ զարկ տան ընկերային ու բարեսիրական օժանդակութիւններուն՝ թեթեւեղութեամբ քաղաքայիններուն կրած տնտեսական, կենցաղային, առողջապահական ու ապրուստի ծանր բեռը: Այս ծիրին մէջ, անհրաժեշտ նկատուեցաւ ներկայ փուլին անխախտ պահել լիբանանահայ յուսովեան անվտանգութիւնն ու միասնականութիւնը եւ ճիշդ չինայել երաշխաւորելու լիբանանահայ համայնքի կենսունակութիւնը: Անոր պատմական դերակատարութեան շարունակականութիւնը: Միջկուսակցական ժողովը անդրադարձաւ նաեւ պատմութեան ընթացքին Լիբանանի հանդէպ միջոց ալ թշնամական վերաբերմունք որդեգրած, երկար ժամանակ զայն իր լուծին ենթարկած, զայն սովամահ դարձուցած, ծաւալապաշտ ու ցեղասպան թուրքիոյ Լիբանանի նկատմամբ որդեգրած նորօրեայ տխուր վերաբերմունքին, որ կը սպառնայ այս անգամ երկրի կայունութեան ու ապահովութեան: Այս իմաստով անհրաժեշտ նկատուեցաւ ցուցաբերել համալիբանանեան զգաստութիւն եւ խոհեմութիւն: Ժողովը անդրադարձաւ նաեւ հայաստանեան ու արցախեան վերջին իրադարձութիւններուն: Որոշուեցաւ յառաջիկայ հանդիպումին եզրակացնել Հայոց Յեղասպանութեան 105-ամեակի ոգեկոչման համահայկական ձեռնարկներու մանրամասնութիւնները:

ՄԴՀԿ Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմին ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական Կոմիտէ ՌԱԿ Լիբանանի Շրջանային Վարչութիւն

Հայաստանի պատմագիտական միջավայրում եւ ընթերցող լայն հասարակութեան մօտ Ե. Ճէրէճեանի անունը յայտնի դարձաւ այն բանից յետոյ, երբ նա 2016 թուականին «Հրասիրտները» մատենաշարով լոյս ընծայեց «Մեծն Սուրատ», «Ս. Վահագն», «Պանդուխտ» գրքերը: Ընթերցողները համոզուեցին, որ Ե. Չարենցից փոխառնուած «հրասիրտներ»ով Ե. Ճէրէճեանը կարողացել է ընթերցողին ներկայացնել աւելի խորը գիտական, միանգամայն նոր վաւերագրերով ու փաստական տուեալներով հարստացած, չստուգուած կարծիքներից զերծ, աւելի վաւերական «հրասիրտներ»: Այս աշխատութիւններին ծանօթանալիս, մենք եւս համոզուեցինք, որ Ե. Ճէրէճեանը, իր նպատակին հասնելու համար, աշխատանք ու ժամանակ չի խնայել արխիւադարանների գործնական, այդ ժամանակաշրջանի մամուլի էջերից, յուշագրողների վկայութիւններից դուրս բերելու պատմութեան փոշու տակ մնացած ամենափոքր մանրամասնութիւնները, եւ համադրական լուրջ աշխատանքից յետոյ՝ հին ու ծանօթ հերոսներին հանրութեանն է ներկայացրել աւելի վերանորոգուած ու վերակենդանացած:


«Ժիրայր»ի պարագայում, հեղինակը չի շեղուել իր սկզբունքներից: Ընդհակառակը՝ նա համոզուած եւ համարձակ քայլերով ոչ միայն ժիրայրի կենսագրութիւնը հարստացրել է նոր նիւթերով, այլեւ նրանից հեռացրել է մի շարք արմատակացած կարծրատիպեր, յառաջ քաշել միանգամայն նոր վար-



կածներ: Յարդ, պատմագրութեան մէջ տիրական ու անվիճելի միակ տեսակէտն այն է եղել, որ ժիրայր 1876-1890թթ., շուրջ 14 տարի (լաւագոյն դէպքում 10 տարի), գտնուել է Այսրեփոխական հետ եւ կրել է նրանց զաղափարական ազդեցութիւնը: Այս տեսակէտը վերակրկնուել եւ ամրագրուել է հանրագիտարաններում եւ գիտական հրատարակութիւններում: Ե. Ճէրէճեանը մերժում է այս տեսակէտը եւ փաստական հարուստ նիւթերի հիման վրայ ապացուցում է, որ նշուած ժամանակաշրջանում ժիրայր առաւելապէս գտնուել է Օսմանեան կայսրութեան տարածքում, սկզբնական ժամանակահատուածում՝ Չէլթուքում եւ նրա գիւղերից՝ Կոկիստում, ապա Երզնկայում (երկու առիթներով), Բինկեանում, Տեւրիկում, Չիմարայում, երկու անգամ (1881 եւ 1886) այցելել է Կ. Պոլիս, 1886թ.ին՝ Իսկենտերուքում, 1888-1890թթ.՝ Չորք-Մարզպանում եւ վերջապէս՝ Հաճընում: Իր գտնուած բոլոր վայրերում, ժիրայր ուսուցչութիւն է արել հայկական դպրոցներում: Նրա թաքուն նպատակն է եղել պատանիների մէջ սերմանել ազգասիրութիւն, սովորեցնել մարտունակութիւն, կազմակերպել նրանց համար զաղտնի զինավարժութիւններ: Հեղինակին յաջողուել է ժրջան կերպով հաւաքել ու հրատարակել ժիրայրի աշակերտների (որոնց մի կարեւոր մասը ապագայում ազատագրական պայքարի նուիրեալներ եւ ազգային գործիչներ են դարձել) սրտառուչ յուշերը իրենց ուսուցչի մասին: Ուստի հեղինակը միանգամայն իրաւացիօրէն եզրակացել է, որ ժիրայր, իր շարժուն այս վիճակում, չէր կարող 10-ից 14 տարի անընդհատ գտնուել Այսրեփոխականում: Առաւելագոյնը նա կա-

րող էր այցելութիւններ կազմակերպել Թիֆլիս, մի բան, որ այդ շրջանի բոլոր հասարակական գործիչների ու մտաւորականների ցանկութիւնն էր: Իսկ այդ ժամանակաշրջանում, Ռուսաստանից Այսրեփոխական թափանցած յեղափոխական զաղափարախօսութիւնը նարողնիկութիւնն էր: Հեղինակը այս կապակցութեամբ եւս տալիս է իր շատ տրամաբանական եզրակացութիւնը: «Ժիրայր չէր կարող գործակցել ուսումնարանների հետ, առաւել եւս կրել նրանց զաղափարական ազդեցութիւնը, այն պարզ պատճառով, որ նա ուսուցչին չէր տէր եւ նարողնիկների կողմից քննարկուած հարցերին «անհաղորդ էր», - գրում է հեղինակը: Ե. Ճէրէճեանը, փաստագրական նիւթերի վերլուծութեամբ, բացայայտում է, որ Թիֆլիսի հայ նարողնիկները, իրենց ուսումնարաններում (եւ այլազգի) զաղափարակիցների հետեւողութեամբ, Թիֆլիսում հաստատուած Մշտյ դաշտի պանդուխտներից կազմել են երեք խմբակներ, բնականաբար նրանց պարագմունքները պէտք է լինէին հայերէն լեզուով եւ շօշափէին արեւմտահայ պանդուխտներին հետաքրքրող նիւթեր: Ահա այդ միջավայրում է, որ ժիրայր կարող էր «ըսելիք, լսելիք եւ անելիք» ունենալ, ուր նաեւ ազդուած լինէր հայ նարողնիկների զաղափարներից: Աշխատութիւնում՝ հեղինակի կատարած կարեւոր բացայայտում-

ծել պատերազմին մասնակցել չցանկացող Տէրսիմի քրտերին հետ: Այդ գործին առնչուած է ժիրայրը, որտեղից էլ սկիզբ է առնում նրա բարեկամական կապերը քզըլպաշ քրտերի հետ, որը շարունակուած է նրա կեանքի ամբողջ ընթացքում: Հեղինակը հրատարակուած փաստերով ցոյց է տալիս, որ 1890թ. ժիրայրը վերադառնում է իր ծննդավայրը: Նոյն տարուայ Յուլիսին, Կ. Պոլսում տեղի է ունենում Գում Գաբուրի ժողովրդական յայտնի ցոյցը: Այն իր համարձակութեամբ աննախընթաց երեւոյթ էր: Յոյցի կազմակերպիչներին յայտնաբերելը ու ձերբակալելը դառնում է զաղտնի ոստիկանութեան առաջնահերթ խնդիրը: Շուտով բացայայտուած է, որ ցոյցի գլխաւոր կազմակերպիչն է եղել ժիրայրի կրտսեր եղբայրը՝ Համբարձում Պոյաճեանը (Մեծն Սուրատ, ծն. Հաճըն, 1860թ. - կախաղան հանուած Կեսարիա, 1915թ.): Երբ Կ. Պոլսում Սուրատի հետքերը գտնուել բոլոր փորձերը ձախողուած են, իշխանութիւնները Հաճընում խուզարկում են նրա հայրական տունը, փորձում ձերբակալել ժիրայրին: Վերջինս թաքնուած է: Ձերբակալուած եւ բանտարկուած են նրա մայրը՝ Սառան, քոյրը՝ Հայկանուշը եւ բոլոր գործակիցները: Իրագարծութիւնների այս ընթացքը մեկնաբանելիս՝ հեղինակը ընդգծում է, որ առաջին անգամ հայ մամուլում երեւում է զաղտնապահ-



ներից է նաեւ ժիրայրի գործունէութիւնը 1877-1878 ուսումնարանական պատերազմի ընթացքում: Իր նոր տեսակէտը հանրամատչելի եւ համոզիչ դարձնելու համար, հեղինակը նախ ներկայացնում է այն երեք ձեւերը եւ մեթոդները, որոնց միջոցով հայ երիտասարդութիւնը, այդ թւում առաջին հերթին արեւմտահայերը, կարող էին, ուսական բանակի կազմում, մասնակցել պատերազմական գործողութիւններին: Ապա նա մեկնաբանում է Տէրսիմ գաւառի քզըլպաշ քրտերի հակասոսմանեան, ապստամբական տրամադրութիւնները, վերջիններիս շարքում՝ Երզնկա գաւառին (որտեղ գտնուել էր ժիրայրը այդ ժամանակ) սահմանակից Գուգիջան գաւառակի բնակիչները: Զօր. Լազարեւ փորձում է կապեր ստեղ-

ժիրայրի անունը: Փախուստի մէջ գտնուող ժիրայրը մեկնում է Փոքր Հայքի շրջանները եւ իր ուսերին վերցնում ազատագրական պայքարի լայն ծաւալի գործունէութիւն: Այդ օրերին շրջան են մուտ գործում նաեւ Հնչակեան կուսակցութեան գործիչները: Ժիրայրը ծանօթանում է նրանց հետ եւ միանում կուսակցութեանը: Հրատարակ են գալիս ֆետայական հանրածանօթ խումբեր: Քաղաքներում կազմակերպուած են ընդդատակեայ զինեալ խումբեր: Ե. Ճէրէճեանը մէկ առ մէկ թուարկում է այն քաղաքներն ու գիւղերը որտեղ այցելել է ժիրայրը եւ տալիս է այդ վայրերում նրա կատարած գործերի ամփոփ

Նոր Lnju Տեսած Գիրքեր Սարգիս Վահագնի Ինքս` Ինձ Հետ Յուշավեպ Lnu Անճելըս 2019

ԳՐԻԳՈՐ ՔԵՕՍԵԵԱՆ

Սիրելի Սարգիս Վահագն,
Վերջին հատորդ որքան ու-
րախացուց նոյնքան նաեւ տիրե-
ցուց գիրս: Ինչպէս որ բարեկամա-
կան մակագրութեանդ մէջ ալ նշած
էիր՝ «Հիներէն մնացինք ես ու
դուն», իմաստով մը՝ «Մնացոր-
դաց» էն միայն երկու ներկայացու-
ցիչներ գրողներու այն գեղեցիկ
դարաստանէն, որ ծլարձակուած էր
Գրական Շրջանակի եւ միաժամա-
նակ բարեկամ նոյնանման շրջա-
նակներու մէջ: Այդ երիտասարդ-
ները կ'ապրէին հաւատքով եւ կ'երկ-
նէին եռանդազին մայրիներու երկ-
րին մէջ: Ասիկա ըսելու համար
նաեւ թէ միայն է՛ս է որ ամէնէն
շատ կը հասկնամ բոլոր ըսածներդ
եւ չըսածներդ ալ, որոնք շատ են,
մասնաւորաբար Գրական Շրջա-
նակի տղոց յատկացուած հատ-
ուածներուդ մէջ: Շրջանակ մը՝
որուն շուրջ երկու տարի եղած էի
նաեւ ատենադպիրը, ամէն ուրբա-
թօրեայ հանդիպումներուն հարա-
գատօրէն ամփոփելով այնքան
խղճամտօրէն պատրաստուած գե-
կոյցները եւ այդ մասին արտայայ-
տուող ներկաներուն դեր ու դէմ
կարծիքները, երբեմն այնքան
բուռն եւ անողոք: Կը ցաւիմ որ
ատենադպիրի պաշտօնէս հրաժա-
րականէս ետք ատենագրութեանց
երկու տետրակները Գեղամ Սեւա-
նին փոխանցեցի, առանց կրկնօրի-
նակները ապահովելու, երբ ան
ինձի յայտնեց զանոնք ունենալու
վարչութեան փափաքը:

Գիրքդ կարգադրի ոչ միայն իր
արժանի ուղարկութեամբ, այլ նա-
եւ առանց հապճեպի, ինչպէս վեր-
ջին շրջանին սրընդաց կը կարգամ
կարգ մը հատորներ վերէն վար
շեղակի ձեւով: Ասիկա յարգանք
մըն էր նաեւ մեր անցեալին եւ
գրեթէ մէկ դարու կեանքի փորձա-
ռութեան: Շնորհակալ եմ որ պա-
տեհութիւնը տուիր յիշողութեանս
մէջ վերակենդանացնելու շատ մը
դէպքեր եւ անուններ մեր հայկա-
կան կեանքէն: Թէեւ մեր ընտանիքը
ապրած է հայկական թաղերէն դուրս
եւ ամէն օր չեմ շնչած անոնց
ֆոլքըրային մթնոլորտը, սակայն
լաւապէս տեղեակ եմ եւ գիտակ
պատկերուած բոլոր մանրամաս-
նութիւններուն եւ դէպքերուն շնոր-
հիւ բարեկամական կապերուս եւ
այցելութիւններուս: Երեւակայէ որ
հաճոյքով վերջիչեցի պատանեկու-
թեանս «Իարսամպանի»», քանի
ամէն անգամ որ Սահակեան մար-
գադաշտէն դուրս կ'ելլէի Հ.Մ.Մ.-ի
ոտնագնդակի մրցումներէն ետք,
քայլերս արտորանքով կ'ուղղէի դէ-
պի անոր շարժական կրպակը պա-
պակս յագեցնելու համար սառնո-
րակ օշարակով: Հիմա միայն քեզմէ
կ'իմանամ որ մեր հերոսը կը
կոչուի եղբր «Ընկեր Խեչօ»: Շատ
ուշ չէ...

Գիրքդ գրած ես նորընծայի
հոգիով եւ մինչեւ վերջ պահած՝
զգացումի թարմութիւնդ: Իսկ այդ
մերձեցումը վերածուած է յափշ-
տակութեան այն ամէն երեւոյթի եւ
իրադարձութեան առջեւ, որ աղբրս
ունի Հայկուհիին հետ, սկսեալ այն
օրէն երբ փողոցի մը մէջ հեռուէն
հագիւ թէ նշամարած ես իր անծա-
նօթ աղջկայ ուրուականը՝ իսկոյն
սիրտդ թռած է, ու ապա երբ իր
հետ բարեկամացար, նշանուցար,



ամուսնացար, հայրացար: Այն հաս-
տատ տպաւորութիւնը ունիմ թէ
ոտքերդ դեռ գետին չեն դպած,
հիմա որ մեծ հայր դարձած ես:
Վարկանիշը կը պատկանի երկու-
քիդ:

Պատումիդ ենթախորքը դուն
ըլլալով եւ քու ապրումներդ, ան-
խուսափելի զգացական երանգ մը
նաեւ կ'երկարի մէկ ծայրէն միւսը:
Կը բողոքես, կը հակադարձես, նոյ-
նիսկ կը բռնկիս այն բոլոր երե-
ւոյթներուն ի տես երբ կը կը
խորհիս թէ ընկերայն կամ մարդ-
կային տեսակէտէ, նոյնպէ՛ս ար-
ուեստի դիտանկիւնէ, արդարացի
չեն: Ասիկա քննադատութիւն չէ որ
կ'ընես: Գիտես թէ այդ օրերուն
իսկ որքան պաշտապանած եմ ազա-
տութիւնը, մասնաւորաբար ար-
ուեստի մէջ, է՛ս, Շրջանակի «մանր
քաղքենի»»: Ահա հոս անխուսա-
փելիօրէն դէմ յանդիման կու գանք
այն բոլոր հարցերուն որոնք բնո-
րոշիչ են Գրական Շրջանակին,
անոր եզակի գոյութեան, իր բոլոր
առաւելութիւններով եւ թերու-
թիւններով, խանդավառիչ երես-
ներով եւ ջլատիչ սեղմումներով,
իրագործումներով եւ ծաղիկներ
թառամեցնող խորշակով: Անոնց
որոշ չափով անդրադարձած ես
նոյնիսկ հասցէագրութեամբ: Այ-
սուհանդերձ քեզմէ սպասելի էր
դեռ աւելին, քանի որ կափարիչը
բացած ես, օգտակար պիտի ըլլար
որ բոլոր շոգիները դուրս ելլէին եւ
պատկերացումը ըլլար ամբողջա-
կան: Ասիկա անհրաժեշտ աշխա-
տանք մըն էր, եւ ո՞վ պիտի
կատարէր այդ ներկայացումը եթէ
ոչ դուն: Իմ ուղղութեանս մի
նայիր, ես ձեռքս լուացած եմ շատ
մը բաներէ:

Կը յիշեմ քու Կոստան Չարեա-
նի պարագադ: Կը յիշեմ նաեւ թէ
ուրիշ առթիւ նիւթերէն մէկն ալ
նոյն Չարեանի «Տատրագոմի Հար-
սը» վիպերգին նուիրուած հրայր-
քոտ վիճաբանական ասուլիսն էր:
Որպէս ազատ մտածողութեան տէր՝
ես ստանձնած էի Սանային պաշտ-
պան փաստաբանի դերը, հագիւ մի
քանի ժամ իր ամուսինը տեսած-
չտեսած այդ դժբախտ նորահար-
սին, քանի Յովանը հեռացած եւ
միացած էր ֆետայիներուն: Մեծ
բացակայ մը եւ անգոյ ամուսին մը՝
Յովանը, որ սակայն տարիներ ետք
ժամանակ կ'ունենար իր ընկերնե-
րով լեռներէն իջնելու սպաննելու
համար իր կինը եւ քիւրտ տղան,
ինքն ալ խելագարելու գնով: Կոս-
տան Չարեանի կապակցութեամբ
վերապահութիւն մը ունիմ յայտ-
նած կարծիքիդ, երբ այդքան կը
գովերգես խորհրդային Հայաստա-
նի մէջ «Նաւը լեռան վրայ» վէպին

Հանրայայտ Գեղանկարիչ Շմաւոն Շմաւոնեանի Ցուցահանդէսի Բացումը Փասատինայի Մէջ




Փետրուարի 28-ին Փասատի-
նայի Antique Warehouse սրահում
տեղի ունեցաւ ՀՀ վաստակաւոր
նկարիչ Շմաւոն Շմաւոնեանի աշ-
խատանքների ցուցահանդէսը: Ներ-
կայացուած էին նկարչի վերջին
մէկ տարուայ գեղանկարները:
Ցուցահանդէսի բացման արա-
րողութեանը ներկայ էին եւ ելոյթի
խօսքով հանդէս եկան Լոս Անջե-
լեսում ՀՀ գլխաւոր հիւպատոս,
դեսպան Արմէն Բայբուրդեանը,
Փասատինայի քաղաքապետ Թերի
Թորնթըր, քաղաքային խորհրդի
անդամ ձոն Քէնեդին:
Բացման խօսքում դեսպան
Բայբուրդեանը բարձր գնահատեց

Շմաւոն Շմաւոնեանի արուեստը,
որը պատշաճ գնահատանքի է ար-
ժանացել ոչ միայն Հայաստանում,
այլեւ արտերկրում, մասնաւորա-
պէս արեւմտեան Ամն-ում: Այստեղ
նրա աշխատանքները կարելի է
տեսնել «Կլենտոնի Մեմորիալ
հիւանդանոցում» կամ տեղական
պետական գրասենեակներում:
Դոկտ. Արմէն Բայբուրդեանի խօս-
քով, վարպետի գունեղ կտաւները
լոյս եւ լաւատեսութիւն են սփռում:
«Շմաւոն Շմաւոնեանի ստեղծա-
գործական ակտիւ գործունէութիւնը
մշակութային դիւանագիտութեան
վառ դրսեւորումներից է», ասաց
ՀՀ գլխաւոր հիւպատոսը:

հրատարակութիւնը, «Ի հակադ-
րութիւն Գառնիկներու անգիջող
կեցումը քին: Լաւ գիտես թէ այս
վերջինները որպէս «գաղափարա-
կան գիտութեամբ հարեալներ» -ինչպէս
ամէն նման փիլիսոփայական կամ
կրօնական հոսանքներու կամակոր
հետեւողներու- մեքենական գոր-
ծադրողներն էին վերէն եկած հրա-
հանգներուն, իսկ Չարեանի հան-
դէպ Գառնիկներու եւ Երեւանի
դիրքեր նոյնն էին ա՛յդ տարիներ-
ուն: Կոստան Չարեան Հայաստան
զնաց Աստուած գիտէ ի՛նչ պատ-
ճառներով եւ ի՛նչ խոստումներով
- իր հայրենասիրութիւնը ինզրոյ
առարկայ չէ հոս: Երեւանի իշխա-
նութիւնները չհրատարակեցին քու
կարգացած վէպդ այնպէս ինչպէս
որ դուն սիրած էիր, այլ իրենց
կողմէ վերամշակուած-իմբացր-
ուած անընդունելի օրինակ մը
ներկայացուցին Չարեանին, որ ի
վերջոյ ճարահատ ստորագրեց կա-
րենալ անդամ ըլլալու համար Գրող-
ներու Միութեան, այլ խօսքով՝
դառնայ ամսականաւոր: Գրողներու
վրայ ճմլող մեքենան կը շարունա-
կէր բանիլ: Կը յիշես այս առթիւ
արտասահմանի մէջ ծագած իրա-
րանցումը, եւ կողմի մը բացատրու-
թիւնը՝ թէ վէպը «շահեցաւ» վե-
րամշակումով: Բայց ասիկա ոչ մէկ
կապ ունի բուն հարցին հետ:

Հատորդ ինքնաներկայացում մըն է
իր անհատական թէ գրական կող-
մերով, նոյնիսկ արժեւորումներով:
Ես տեղեակ չէի քու անձնական-
ընտանեկան կեանքիդ մանրամաս-
նութիւններուն, նախամուսնական
թէ յետամուսնական, քանի հեռու
կը մնայինք կենցաղային մտերմու-
թիւններէ: Տեղեկութիւններդ ամ-
բողջացուցին ծանօթութիւնս, մաս-
նաւորաբար երբք գաւակներուդ
փայլուն ուսումնական թէ կեանքի
յաջողութիւնները, որոնցմով ար-
դարօրէն հպարտանալու պատճառ-
ներ ունիս Հայկուհիին հետ: Իսկ
զրասէր ընթերցողին մասնաւոր
ուշագրութիւն գրաւող մասը հա-
մապատկեր մըն է Լիբանանի որոշ
շրջանի մը գրական եւ ընկերային
եռուզեռ կեանքին, անուններու ալ
նշումով եւ ի հարկին արուեստա-
գէտներուն գործերուն հպանցիկ ար-
ժեւորումներով: Կարելի է ըսել
պատմական շրջանի մը հայելին,
որ իր ներկայացուցիչներով ակօ-
սեց մեր գրական, արուեստի եւ
հրապարագրական դաշտը, իր ար-
ժէքաւոր դրոշմը դնելով անոր
վրայ: Այս ուղղութեամբ մեծապէս
շնորհակարտելի աշխատանք մը տա-
րած ես:
Պիտի ուզէի խուսափիլ գիր-
քին տպագրական-հրատարակչա-
կան սխալները մատնանշելէ, սա-
կայն կէտ մը դէմս կը ցցուի.
զարմանալի գտայ տողերու, պար-
բերութիւններու եւ մանաւանդ ար-
ձակագիր Չարեան Որբունիի յատ-
կացուած ամբողջ երեք էջերու
(118-120) նոյնութեամբ կրկնակ
տպագրութիւնը, մասնաւորաբար
գիրքի մը պարագային, որուն հրա-
տարակութիւնը արժանացած է երեք
զոյգ աչքերու նախաքննութեան:
Բարեբախտաբար անոնք եւ

«Առաջնեկը՝ Նորովի». Գրական-Երաժշտական Ցերեկոյթ Մայր Աթոռում



ՊԱՊԻՆ ՍՈՒՐԱՏԵԱՆ

Մարտի 2-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչէ եւ Թամար Մանուկեան» Մատենադարանում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Մայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահութեամբ եւ Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Սահակ արքեպիսկոպոս Մաշալեանի մասնակցութեամբ, տեղի ունեցաւ «Առաջնեկը՝ Նորովի» խորագրով գրական-երաժշտական ցերեկոյթ՝ նուիրուած Սուրբ Գրիգոր Նարեկացու «Մատենան Ողբերգութեան» աղօթամատենանի աշխարհաբար (արեւմտահայերէն, թարգմանութիւնը՝ Միսաք Գոչունեան (Քասիմ)) առաջին ամբողջական թարգմանութեան վերահրատարակութեանը:



Միջոցառումը սկսուեց Տէրունական աղօթքով, որից յետոյ ներկայներին ողջունեց Մայր Աթոռի Մատենադարանի տնօրէն Արժանապատիւ Տ. Արարատ քահանայ Պողոսեանը: Այնուհետեւ կատարուած թարգմանութեան վերաբերեալ բանախօսութեամբ հանդէս եկաւ Մայր Աթոռի Միջեկեղեցական յարաբերութիւնների բաժնի պատասխանատու Հոգեշնորհ Տ. Շահէ ծայրագոյն վարդապետ Անանեանը:

Շնորհանդէսի ընթացքում «Գեղարդ» երգչախմբի (գեղարուեստական ղեկավար՝ ՀՀ արուեստի վաստակաւոր գործիչ, դոկտոր, փրոֆեսոր Մհեր Նաւոյեան) մենակատարներ Լուիզա Երեմեանն ու Անահիտ Պապայեանը շարականներ կատարեցին, իսկ ՀՀ վաստակաւոր արտիստ Դաւիթ Յակոբեանը ներկայների համար ընթերցեց Ս. Գրիգոր Նարեկացու աղօթագրքից մի հատուած:

Ցերեկոյթին իր սրտի խօսք ասաց Կ. Պոլսի «Ժամանակ» օրաթերթի գլխաւոր խմբագիր Արա Գոչունեանը: Խօսելով գրքի գիտական եւ մշակութային արժէքի մասին՝ պարոն Գոչունեանը նաեւ իր երախտագիտութիւնն ու շնորհակալութիւնը յայտնեց Վեհափառ Հայրապետին եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչական բաժնին՝ գրքի վերահրատարակմանն աջակցելու եւ «Նարեկ»-ը ժողովրդի բոլոր խաւերին մատչելի դարձնելու գործում կարեւորագոյն դերակատարութիւն ունենալու համար:

Վերջում շնորհանդէսի մասնակիցներին իր օրհնութիւնն ու պատգամը փոխանցեց Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Սահակ արքեպիսկոպոս Մաշալեանը:

«Երբ խօսում ենք «Նարեկ»-ի մասին, խօսում ենք աղօթքի մասին: Աղօթքը մարդու եւ աղօթքը ազգի զօրութիւնն է: Եթէ մէկ բառի մէջ ամփոփենք աղօթամատենան, կ'ասենք՝ ողորմութիւն՝ Աստուծոյ ողորմութիւնը: Սուրբ Նարեկը մեզ սովորեցնում է, որ մենք այդքան էլ զօրաւոր չենք եւ մեր վաղուայ օրուայ համար Աստուծոյ ողորմութիւնն է պէտք: Աղօթամատենանը ծնուել է մարդուն ողորմութիւն խնդրել սովորեցնելու համար», - ասաց Սահակ Պատրիարքը՝ յորդորելով ամէնքին աղօթել, քանի որ աղօթքը լոյս է եւ միացնում է մարդուն Աստուծոյ լոյսի հետ:

«Ես հպարտ եմ, որ այսօր Պոլսի համայնքի ծոցից դուրս եկած արժէք է կրկին հրապարակ բերւում 100 տարի յետոյ՝ ի օգուտ ամբողջ հայութեան», - ընդգծեց նա՝ շնորհաւորելով եւ շնորհակալութիւն յայտնելով «Ժամանակ»

Վերականգնուեցաւ Մարտիրոս Սարեանի «Կոստանդնուպոլսի Շները» Կտաւը



28 փետրուարին ընթացք առին մեծանուն նկարիչ Մարտիրոս Սարեանի 140-ամեակին նուիրուած ձեռնարկները: Նոյն օրը տեղի ունեցաւ համախմբվում Սարեանի արձանին մօտ, այնուհետեւ՝ այցելութիւն Կոմիտասի անուան գրասրահի պանթէոն՝ նկարիչին շիրմը, իսկ Աւետիք Իսահակեանի գրադարանին մէջ տեղի ունեցաւ Սարեանի ծննդեան 140-ամեակին նուիրուած «Յուշեր Մարտիրոս Սարեանի Մասին» գիրքին շնորհահանդէսը:

29 փետրուարին՝ նկարիչին ծննդեան օրը, տուն-թանգարանին մէջ տեղի ունեցան զանազան ձեռնարկներ:

Մարտիրոս Սարեանի տուն-թանգարանի տնօրէն Ռուզան Սարեանի տեղեկութիւններով՝ հիմնովին վերանորոգուած է մեծ վարպետին 1910-ին նկարած «Կոստանդնուպոլսի Շները» կտաւը, որ պիտի ներկայացուի արուեստասէր հասարակութեան:

Անոր տեղեկութիւններով՝ կա-

րելոր հարց է մշակութային արժէքները պահպանել եւ բարւոք վիճակի մէջ փոխանցել յաջորդ սերունդներուն: «Սարեանը մեծ մտահոգութիւն ունէր այդ նկարին հետ կապուած: Դեռ իր կենդանութեան օրօք անիկա վնասուած էր: Փորձած է վրան աշխատիլ, կարգի բերել, բայց, ի հարկէ, պէտք էր մասնագիտական աշխատանք, որ կատարուեցաւ», ըսած է տուն-թանգարանի տնօրէնը:

Ռ. Սարեան նաեւ նշած է, որ 20 Մարտին պիտի ներկայացուին Մարտիրոս Սարեանի՝ «Ալմաստ» օփերային համար եղած ուրուսագիծերը (էսքիզները): «Տարիներ շարունակ կը խօսէինք, որ օփերան բեմ բարձրանայ սարեանական ձեւաւորումով, եւ, կարծես թէ, միւս տարի, երբ պիտի տօնենք Սպենդիարեանի 150-ամեակը, արդէն կ'ունենանք «Ալմաստ»ը բեմի վրայ նաեւ Սարեանի՝ վերականգնուած ձեւաւորումով», ընդգծած է ան:

օրաթերթի խմբագրին, որ չթողեց իր ընտանեկան ժառանգութիւնը մնա գրադարանների դարակների վրայ:
Կ.Պոլսի Հայոց Պատրիարքը

նաեւ իր շնորհակալական խօսքն ուղղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին գրքի վերահրատարակութեան եւ ժողովրդին հասանելի դարձնելու կապակցութեամբ:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$50,00 * \$100,00 (first class) for USA

\$ 125,00 (Air Mail) for Canada.

\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State: ----- Zip Code: -----

Country: -----

Tel: ----- Email: -----

Յաջողութեան, Սիրոյ եւ Երջանկութեան Հասնելու Համար Տրամադրուածութիւն Պէտք է

Յաջողութեան, սիրոյ եւ երջանկութեան տրամադրուածութիւնը կախուած է քանի մը «բաղադրիչ տարրերէ», ինչպէս՝

- 1) Դրական մտքերէ: Յաջողութիւնը նախեալ բաղկացած է դրական մտքերէ: Եթէ դուք տրամադրուած էք անյաջողութեան կամ ամէն ինչ կ'ընէք պարտուելու համար, ի հարկէ պիտի պարտուիք: Հաւատացէ՛ք յաջողութեան, մտածեցէ՛ք յաջողութեան մասին եւ դուք պիտի ունենաք զայն:
- 2) Ճիշդ գործողութիւններէ ու մտադրութիւններէ: Եթէ դուք բացասական կը մտածէք, ուստի ձեր մտադրութիւններն ու գործողութիւններն ալ բացասական պիտի ըլլան: Պէտք է հասկնալ, որ դուք կը

- կերտէք ձեր ներկան ու ապագան:
- 3) Յոյզերէ: Սիրոյ «կարգաւորում»ը բաղկացած է յոյզերէ: Ստիպեցէ՛ք ձեր ուղեղին առաւել յաճախ մտածելու սիրոյ, երջանկութեան եւ ուրախութեան մասին եւ պիտի տեսնէք գործնականորէն ուղեղի հնարաւորութիւնները: Չէ՞ որ եթէ դուք ձեզի չօգնէք, ոչ ոք պիտի օգնէ:
- 4) Ցանկութենէ, նպատակներէ եւ երազանքէ: Երազանքներով ապրող մարդիկ կ'ընեն հնարաւոր ամէն բան՝ զայն իրականացնելու եւ ցանկալին ձեռք բերելու համար: Նախ սորվեցէ՛ք գնահատել այն ինչ ունիք, իսկ յետոյ ձգտեցէ՛ք նոր նպատակներու եւ ցանկութիւններու իրականացման:

Սիրոյ Խոստովանութիւն Ընելու Համար Յաճախ Բառերը Հարկաւոր Չեն

Հաղորդակցութիւնը յարաբերութիւններու ամենակարեւոր մասն է: Բայց շատ յաճախ, յատկապէս յարաբերութիւններու սկզբնական փուլերուն, մենք կը դժուարանանք բառերով արտայայտելու մեր զգացումները:

- Ամենակարեւոր խոստովանութիւնը կատարելու ժամանակ տղամարդիկ յաճախ չեն կրնար ճիշդ բառեր ընտրել եւ զգացումները կ'արտայայտեն գործողութիւններով: Այսպէս՝
 - Սիրահարուած տղամարդը աւելի երկար կը համբուրուի, քանի որ երբ Դուք իր կողքն էք, ան կը մոռնայ ուրիշ ամէն բան:
 - Դուք կը զգաք, որ միշտ կը գտնուիք անոր ուշադրութեան կեդրոնին:
 - Անկախ այն բանէն, թէ ինչ պատահած է ձեր յարաբերութիւնն ներքին մէջ, անկախ այն բանէն, թէ ինչ վէճ տեղի ունեցած է, կրնաք

- վստահ ըլլալ՝ յաջողութիւնը օրը ան պիտի ժպտի Ձեզի այնպէս, ինչպէս նախապէս:
- Ան առիթը չի փախցնէր Ձեզի հպելու համար:
- Ան կը ծիծաղի, երբ Դուք իր կողքն էք, քանի որ Ձեր հետ իրեն յարմարաւէտ կը զգայ:
- Աչքերը հոգիի հայելին են, որոնց ան կ'ուզէ յաճախ նայիլ:
- Ան ոչ միայն կ'ուրախանայ Ձեր հաղորդագրութիւններէն, այլեւ կ'օգտագործէ բոլոր յարմար առիթները՝ Ձեզի հաղորդագրութիւն գրելու համար:
- Ան միշտ Ձեր հետ է, երբ իր աջակցութեան կարիքը ունիք:
- Ոչինչ կրնայ համեմատուիլ այն պայծառութեան հետ, որ կը յայտնուի անոր դէմքին, երբ ան կը համբուրէ Ձեզ:
- Անոր ընկերները յարգալից եւ հոգատար վերաբերմունք կը ցուցաբերեն Ձեր հանդէպ:

Ստեպոյնով Կարկանդակ՝ Յարմար Պահքի Շրջանի Համար

Մեծ Պահքի շրջանը կը տեւէ 48 օր՝ Բուն Բարեկենդանէն մինչեւ Սուրբ Յարութեան տօնի նախօրէին: Փորձե՛ք ներկայացնել պահքի յարմար ուտեստներ, որոնցմէ առաջինը ստեպոյնով կարկանդակն է:

Այս շատ համեղ կարկանդակը պատրաստելու համար անհրաժեշտ է. 5 գաւաթ ալիւր, 1 գաւաթ չաքար, 1 գաւաթ ձէթ, 1 գաւաթ ստեպոյնի հիւթ, 1 գաւաթ ստեպոյնի տաշոց, 1 գաւաթ ընկուզեղէն, կէս գաւաթ չամիչ, կէս գաւաթ ճերմակ շոշմայ (քունճութ), 1 թէյի դգալ սոտա, 1 թէյի դգալ կասիա:



յական ամէն տեսակի ախտերէ ու մոլորութիւններէ, մեղանշական մտքերէ, խօսքերէ ու գործերէ մաքրուիլն է, զոյն մով ու ապաշխարութեամբ աստուածահաճոյ եւ առաքինի կեանքին դառնալը: Պահքի շրջանին կարեւոր է հոգեւոր շնորհներու եւ յատկապէս եղբայրասիրութեան մէջ զօրանալը, քանի որ, ինչպէս Եզնիկ կողբացին կ'ըսէ, «մէկը կրնայ կենդանի միւս չուտել, բայց անընդհատ իր եղբոր միւսը ծամել»: Այս պարագային կարեւոր է նաեւ այլ ծայրայեղութենէ մը զգուշանալը. պահք պահելը պէտք է պատճառ դառնայ պահեցողութեան մէջ տկարացողները դատելու. «Ով կ'ուտէ, թող չարհամարհէ անոր» որ չ'ուտէր, իսկ ով չ'ուտէր, թող չզատէ անոր՝ որ կ'ուտէ» (Հռոմ. 14:3):

- Պատրաստութիւն.
- Ալիւրին խառնել չաքարը, ձէթը, ստեպոյնի հիւթն ու տաշոցը, սոտան եւ կասիան:
- Խմորը լաւ շաղելէ ետք աւելցնել մանրուած ընկուզեղէնն ու չամիչը:
- Չանգուածը տարածել նախապէս ձէթոտած եւ ալիւրոտած ափսէի մը մէջ, թաց ձեռքերով տափակցնել մակերեսը ու վրան ցանել քունճութը: Եփել նախ բարձր, ապա ցած ջերմաստիճանով փուռի մէջ:
- Նշենք, որ Պահքը չի սահմանափակուիր միայն կենդանական սնունդէն հրաժարումով. անիկա առաջին հերթին հոգեկան ու բարո-

Ինչե՞ր Ըրած Են Մեր Ծնողները, Որոնք Հիմա Մենք Չենք Ըներ, Բայց Արժէր Սորված Ըլլայինք

1) Անոնք զիրար առաջին տեղը կը դնէին. երբ մեր ծնողները երիտասարդ էին, ամուսինի եւ կնոջ յարաբերութիւնները ընտանիքին մէջ ամենակարեւորն էին: Բայց վերջին 30 եւ աւելի տարիներուն ընթացքին, ծնողները սկսան իրենց զաւակներուն վերաբերիլ իբրեւ տիեզերքի կեղծոններ:

Կարելոր է չմոռնալ ամուսինի հետ յարաբերութիւններուն արժէքը եւ ունենալ առողջ, երջանիկ ընտանիք: Եթէ փոքրիկը կ'ընդհատէ մօր խօսքը, պէտք է խնդրել, որ սպասէ, եթէ ատիկա արտակարգ իրավիճակ է: Փոքրիկները պէտք է հասկնան, որ աշխարհը չի պտուտիր միայն իրենց շուրջը:

2) Անոնք կը ստիպէին երեխաներուն խաղալ փողոցը. հաւանական է, որ երեխայ ժամանակ հեռատեսիլ դիտած էք, բայց աւելի յաճախ ժամանակ անցուցած էք փողոցը: Այսօրուան երեխաները օրական միջինը 7.5 ժամ կ'անցընեն պատուաներուն առջեւ: Եւ ատիկա չի վերաբերիր ուսման կամ կրթութեան:

Իսկ չէ՞ որ թարմ օդն ու դուրսի խաղերը պէտք են իրենց տարիքին: Եւ ատոր համար չեն պահանջուիր խաղահրապարակ կամ լողաւազան:

3) Անոնք կը վստահէին իրենց երեխաներուն. մեզմէ շատերը կը յիշեն, որ ինչպէս մինչեւ ուշ երեկոյ կը գրօնէինք ընկերներով կամ կը մնայինք գիշերելու անոնց տունը: Ծնողները կրնային չզիտնալ, թէ մենք ուր էինք: Դուք կրնաք ատիկա անուանել «դաստիարակութիւն ազատ տրածութեան վրայ», կամ նոյնիսկ մտածել, որ ատիկա վտանգաւոր է: Ճշմարտութիւնը այն է, որ երեխաները վթարներէն աւելի շատ կը զոհուին, քան անոնց կ'առեւանգեն:

4) Անոնք չէին ստիպեր երեխաներուն ամենախելացին ըլլալ. երեխաներուն կը սորվեցնէին հասարակական հմտութիւններ եւ կը զարգացնէին անոնց ստեղծագործական ջիղը: Երեխաները մանկապարտէզ յաճախելով կարողալ չէին գիտեր, իսկ շատերը նոյնիսկ այբուբենը չէին գիտեր: Անոնց կը սորվեցնէին յարգալից ըլլալ, կիսել ունեցածը ընկերներուն հետ ու լաւ ընկերներ ունենալ: Այսօր, սակայն, երեխաները կը մըցին ուսման մէջ ու կը փորձեն ըլլալ բոլորէն լաւ: Բայց ատիկա միայն կը ճնշէ ու կ'անհանգստացնէ գիւրենք:

5) Անոնք երեխաներուն վարք ու կանոն կը սորվեցնէին. շատ երեխաներ ու դեռահասներ մեր

օրերուն զուրկ են վարուելակեր պի կանոններուն տիրապետելէ: Անոնք չեն կրնար տարրական «շնորհակալութիւն» ըսել, երբ իրենց համար որեւէ բան կ'ընեն: Ի հարկէ, նման վարուելակերպի դրսեւորումներ մեր ժամանակ ալ կային, բայց ամէն պարագայի շատ աւելի քիչ էին, քան՝ այսօր:

6) Անոնք կ'ընթրէին ողջ ընտանիքով. ծնողները կրնային գոհել ընտանեկան ընթրիքը՝ յանուն երեխայի արտադա սարանային աշխատանքներուն: Բայց իրականութեան մէջ այդպիսի աւանդութիւններ լաւ պիտի ըլլար վերադարձուէին: Ծնողներու հետ ընթրող երեխաները աւելի հազուադէպ կը տառապին տագնապ ու ընկճախտէ: Անոնք քիչ իրաւախախտումներ կ'ընեն, բայց կ'ունենան լաւ յառաջդիմութիւն, եւ հոգեբանական վիճակի հետ կապուած խնդիրներ չեն ունենար:

7) Անոնք երեխաներուն կը ստիպէին հաւաքել տունը. կը յիշէ՞ք, թէ ինչպէս մեր ծնողները կ'ըսէին, որ չենք կրնար գրօսանքի երթալ, քանի դեռ տունը չենք հաւաքած: Դուք կրնաք զարմացած ըլլալ, թէ ինչերու ընդունակ են ձեր երեխաները:

Անոնց կարելի է վստահիլ տան հետ կապուած շատ աւելի լուրջ խնդիրներ: Ատիկա անոնց ինքնուրոյնութիւն եւ պատասխանատուութիւն կը սորվեցնէ:

8) Անոնք կարգ ու կանոն կը սորվեցնէին ուրիշ երեխաներու. ի՞նչ կ'ընէիք, եթէ ձեր երեխայի ընկերը հարուածէր ձեր երեխային: Հանգիստ կը խնդրէիք, որ վե՞րջ տան: Բայց մեր ծնողները իրենց այլ կերպ կը պահէին: Անոնք կը սկսէին կարգի հրաւիրել ուրիշ երեխաները այնպէս, ինչպէս ատիկա պիտի ընէին իրենց երեխաներու պարագային:

9) Անոնք ծննդեան օրերը կը նշէին տան մէջ. երեկոյթները ժամանակին կը ներառէին, բացի ուտելիքներէն, նաեւ զանազան խաղեր: Մեր ծնողները մասնագէտ լուսանկարիչ եւ սրճարան չէին վարձեր, ու ատիկա այնքան ալ կարեւոր չէր: Երեխաները, ամէն պարագայի, կ'ուրախանային ու հաճոյք կը ստանային պարզ բաներէ:

10) Ամէն բան շատ աւելի պարզ էր ու հասարակ. ժամանակին շատ բան շատ աւելի պարզ էր, քան հիմա: Ծնողները մեզի խաղափայլ չէին տաներ, իսկ երեխաներն ալ չէին շտապել ֆուլթայլին վազել դաշնամուրի դասի: Մենք կ'օգտագործէինք մեր երեւակայութիւնը եւ երջանիկ էինք:

NATIONAL NOTARY ASSOCIATION
NOTARY PUBLIC

MEMBER

Garine Depoyan

626-755-4773
554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106
ghdepoyan@gmail.com

«Ռեալը» Յաղթեց «Բարսելոնային» 2-0

Սպանիայի առաջնության 26-րդ տուրում Մադրիդի «Ռեալը» ընդունեց ախոյեան «Բարսելոնային»: 2:0 հաշվով յաղթանակ տարաւ ֆրանսացի Ջինեդին Չիզանի գլխավորած Արքայական խումբը, որը Լա Լիգայում նախորդ անգամ կատարողական խումբի նկատմամբ առաջնության հասել էր 2016թ. Ապրիլին:



Առաջին խաղակէստում երեք դրուագներում «Ռեալին» կոլից փրկեց բելգիացի դարպասապահ Տիբո Կուրտուան: Երկրորդ խաղակէստում երկու անհաւանական ազատում կատարեց կատարողական խումբի գերմանացի դարպասապահ Մարկ-Անդրե Տէր Շտեգենը:

71-րդ րոպէին «Ռեալը» խփեց առաջին կոլը: Գերմանացի կիսապաշտպան Տոնի Կրոսի փոխանցումից յետոյ աչքի ընկաւ պրագիլացի յարձակուող Վինիսիուս Ժունիորը:

Աւելացուած ժամանակի երկրորդ րոպէին աչքի ընկաւ Դոմինիկյան Հանրապետութիւնը ներկայացնող յարձակուող Մարիանոն, որը մէկ րոպէ առաջ էր փոխարինել Արքայական թիմում 500-րդ հանդիպումն անցկացրած ֆրանսացի յարձակուող Քարիմ Բենզեմային: Գոլային փոխանցումը կատարեց սպանացի պաշտպան Դանիել Կարվախալը:

«Ռեալը» 56 միաւորով գլխավորեց մրցաշարային աղիւսակը, «Բարսելոնան» հետ է 1 միաւոր:

«Մանչեսթեր Սիթին» 7-րդ Անգամ Նուաճեց Անգլիական Լիգայի Գաւաթը



«Մանչեսթեր Սիթին» 7-րդ անգամ եւ երրորդ տարին անընդմէջ նուաճեց Անգլիական լիգայի գաւաթի խաղարկութեան յաղթողի կոչումը: Լոնտոնի «Ուեմբլի» ստադիոնում տեղի ունեցած խաղում կատարողացի Խոսեպ Գուարդիոլայի գլխավորած թիմը մրցեց «Աստոն Վիլայի» հետ եւ առաւելութեան հասաւ 2:1 հաշուով:

Մանչեսթերեան թիմի կազմում աչքի ընկան արժենթիմացի յարձակուող Սերխիո Ագուերոն եւ սպանացի կիսապաշտպան Ռոդրիգո էրնանդեսը:

«Լիւերպոլի» Անպարտելի Շարքը Տեւեց 44 Խաղ

Անգլիայի առաջնութիւնում «Լիւերպոլի» անպարտելի շարքը տեւեց 44 հանդիպում: Պրեմիեր լիգայի 28-րդ տուրում գերմանացի Յուրգեն Կլոպի գլխավորած թիմը հիւրընկալուելիս 0:3 հաշուով պարտուեց «Ուոլթֆորդին»:



«Լիւերպոլը» Պրեմիեր լիգայում պարտութիւն չէր կրել անցած առաջնության 22-րդ տուրից՝ այս ընթացքում տանելով 39 յաղթանակ եւ 5 խաղ աւարտելով ոչ ոքի:

Ռեկորդը պատկանում է Լոնտոնի «Արսենալին», որը 2003թ. Մայիսից մինչեւ 2004թ. Հոկտեմբեր Անգլիայի առաջնութիւնում չի պարտուել 49 անընդմէջ խաղում:

Այս մրցաշրջանում «Լիւերպոլը» տարել է 26 յաղթանակ, «Մանչեսթեր Յունայթեդի» հետ էլ խաղացել էր ոչ ոքի՝ 1:1:

«Լիւերպոլը» 79 միաւորով գլխավորում է մրցաշարային աղիւսակը եւ 22 միաւորի առաւելութիւն ունի մէկ հանդիպում քիչ անցկացրած «Մանչեսթեր Սիթիի» նկատմամբ: Առաջնության աւարտին մնացել է 10 տուր:

«Կալիարի» - «Ռոմա»՝ 3:4 Մխիթարեանի Կոլի ու Կոլային Փոխանցման Զեղինակ



Իտալիայի առաջնության 26-րդ տուրում «Ռոման» պորտուգալացի Պաուլու Ֆոնսեկայի գլխավորութեամբ հիւրընկալուեց «Կալչարիին» եւ առաւելութեան հասաւ 4:3 հաշուով:

Առաջին խաղակէստում հիւրերից դուբլի հեղինակ դարձաւ խորուաթ յարձակուող Նիկոլա Կալինչը: Երկրորդ կոլի դրուագում արդիւնաւէտ փոխանցումը կատարեց Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը:

Երկրորդ խաղակէստում «Ռոմայի» հոլանդացի յարձակուող Զասթին Կլույվերտը Կալինչի փոխանցումից յետոյ հաշիւը դարձրեց 3:1:

Դրանից յետոյ դաշտի տէրերը կարողացան կրճատել հաշուի տարբերութիւնը, բայց 81-րդ րոպէին մայրաքաղաքային թիմը Հենրիխ Մխիթարեանի կոլի շնորհիւ վերականգնեց երկու կոլի առաւելութիւնը: Սերբ պաշտպան Ալեքսանդր Կոլարովի իրացրած տուգանայինից յետոյ Մխիթարեանը չնչին հպումով գնդակ ուղարկեց դարպասը:

«Ռոման» 45 միաւորով 5-րդ տեղում է եւ 3 միաւոր է հետ չորրորդ տեղում ընթացող «Ատալանտայից»: «Կալչարին» 11-րդն է՝ 32 միաւոր:

Օս Եռակի եւ Աշխարհի 11-ակի Ախոյեանը Որակագրկուեց 8 Տարով

Մարզական վճռաբեկ դատարանի որոշմամբ Օլիմպիական խաղերի եռակի, աշխարհի 11-ակի ախոյեան, 28-ամեայ չինացի լողորդ Սուն Յանը հակադոպինգային կանոնների խախտման համար որակագրկուեց 8 տարով:



2018 թուականին Սուն Յանը դոպինգ ստուգման ժամանակ մուրճով կտրել էր դոպինգ նմուշի սրուակը: Զրային մարզաձեւերի միջազգային ֆեդերացիան չէր պատժել մարզիկին, սակայն Համաշխարհային հակադոպինգային գործակալութիւնը բողոքարկել էր Մարզական վճռաբեկ դատարան եւ հասել Սուն Յանի որակագրկման:

2014 թուականին Սուն Յանն արգելուած դեղամիջոց օգտագործելու համար որակագրկուել էր երեք ամսով: Երկրորդ անգամ հակադոպինգային կանոնները խախտելու համար Մարզական վճռաբեկ դատարանը կիրառել է առաւելագոյն պատիժ՝ 8 տարի:

2012թ. Լոնտոնի Օլիմպիական խաղերում Սուն Յանը ախոյեան էր դարձել ազատ ոճով 400 եւ 1500 մետր լողում, իսկ 2016թ. Ռիոյի Օլիմպիական խաղերում՝ ազատ ոճով 200 մետրում:

ՖԻՖԱ-ն Քննարկում է Միջազգային Զանդիպումները Չեղարկելու Զնարաւորութիւնը

ՖԻՖԱ-ի նախագահ Զանի Ինֆանտինոն յայտարարել է, որ ֆուտպոլի միջազգային կազմակերպութիւնը կորոնաւիրուսի պատճառով կարող է չեղարկել առաջիկայում նախատեսուած միջազգային հանդիպումները:

«Առողջ մարդիկ աւելի կարեւոր են, քան ֆուտպոլային հանդիպումները: Պէտք է ուշադրութեամբ հետեւենք կորոնաւիրուսի տարածմանն ու որոշում ընդունենք:

Եթէ վիրուսը շարունակի էլ աւելի մեծ թափ հաւաքել, ապա մենք կը չեղարկենք միջազգային հանդիպումները», - Ինֆանտինոյի խօսքը մէջբերում է The Guardian-ը:

Նշենք, որ ամբողջ աշխարհում կորոնաւիրուսով վարակուել է 83,272 մարդ: Վիրուսը յայտնաբերուել է աշխարհի 53 երկրում:

Կորոնաւիրուսի պատճառով Իտալիայի առաջնության հանդիպումների մեծ մասը կ'անցկացուի առանց հանդիսականի:

Մահացած է Յայտնի Յուշարձանագետ

Շարունակուած էջ 7-էն

մահացաւ հայ ազգի ամենապայծառ ներկայացուցիչներէն մէկը:

«Ան ոչ միայն որպէս գիտնական շատ մեծ էր, այլ որպէս բարոյականութեան դրօշ, ոչ միայն երիտասարդներու, այլև մեզի համար», - ըսած է ան:

Սամուէլ Կարապետեան ծնած է 1961 Յուլիս 30-ին: Արմատներով Արճէշ գաւառի Բերդաղ գիւղէն է: 1978-ին աւարտած է Երեւանի Միսաք Մանուչեանի անուան թիւ 48 դպրոցը:

1975-էն սկսեալ՝ ճամբորդած է Հայկական ԽՍՀ տարածքով բնութիւնը ուսումնասիրելու նպատակով, իսկ 1978-էն սկսեալ կը լուսանկարէր, կը շահէր եւ կը նկարագրէր հայկական յուշարձանները

ամբողջ Պատմական Հայաստանի տարածքով:

Երեք տասնամեակի ընթացքին կը հետազօտէր եւ կը ցուցակագրէր Պատմական Հայաստանի հայ ճարտարապետութեան հազարաւոր նմուշներ:

Կարապետեան յայտնի էր իբրև հարեւան պետութիւններու մէջ հայկական յուշարձաններու նկատմամբ վերաբերմունքի քննադատ: Ան կը կարծէր, որ թուրքիոյ, Ատրպէյճանի, Վրաստանի իշխանութիւնները նպատակաւորաբար կերպով կ'իրականացնէն հայկական յուշարձաններու ոչնչացման քաղաքականութիւն: Իր փաստերը 2007-ին ներկայացուցած էր ԱՄՆ քոնկրէսին եւ 2008-ին՝ Մարդու իրաւունքներու Եւրոպական դատարանին:

Սարգիս Վահագնի Ինքս` Ինձ Զեռ

Շարունակուած էջ 15-էն

կարգ մը մանրուքներ առնչութիւն չունին խորքին եւ գրութեան վաւերագրական արժէքին հետ:

Սիրելի Սարգիս, մնացի՛ր գրիչիդ պէս դաւար:

Ճշդում Զեղինակին Կողմէ

Ես բնաւ չեմ գովերգած Կոստան Զարեանի «Նաւը Լեռան Վրայ» վէպին հայաստանեան տարբերակը, գոր չեմ տեսած այլ լրած՝ անոր յապաւումներու մասին: Այլ չե՛զտած եմ Պէյրուսի Համայնավար վերնախաւին ապուշ հալածանքը Զարեան գրողին հանդէպ զայն ամբաստանելով

որպէս դաշնակցութեան գործակալ, մինչդեռ իրենց սովետական խնամակալները զինք ընդունեցին զրկաբաց:

«Գալով տողամիջեան անիմաստ գծիկներուն, (-) պէտք է նշել թէ անոնք արդիւնք եղան համակարգչային արկածի, 3 փոխանցումներու պատճառով եւ երկու համակարգչային անհամատեղելի (justified) եւ տողադարձային դրոյթներ գործածուելուն արդիւնք, ապա՝ սրբագրողին եւ տպարանին վերջին պահուն առանց իմ վերատեսութեան նոր էջադրում մը կատարելով տպագրելուն, որոնց համար ընթերցողներուն ներողամտութիւնը կը հայցեմ:

Ս. Վ.

«Ժիրայրը» (Մարտիրոս Պոյաճեան)

Շարունակուած էջ 14-էն

բնութագրերը՝ յենուելով ժամանակակիցների յուշագրութիւնների վրայ, քանզի այդ գործունէութիւնից արխիւային նիւթեր ու մամուլի հաղորդումներ մեզ չէին կարող հասնել: Այս բաժնում, հեղինակը սրբագրութիւններ է կատարել այն հեղինակների մօտ, որոնց համար նշուած թուականները կամ վայրերը մոռացութեան եւ այլ պատճառներով հասու չեն եղել եւ կամ պատմական իրականութեան չեն համապատասխանում: Անհնարին է կարգաւ այդ ծանր ու դժուարին պայմաններում ազատագրական պայքարի նետուած այդ խմբերի մաքառումները եւ չհիանալ նրանց անձնուրացութեան եւ հերոսական պայքարի ոգով:

1892թ. Դեկտեմբերին, Ժիրայրի անմիջական գործունէութեան արդիւնքում, Փոքր Հայքի շուրջ 80 բնակավայրերի կարեւոր կառույցների պատերին թրքերէն լեզուով փակցւում են հակասութեան մէջ յայտնի է դառնում որպէս «եաֆթաների խնդիրը»: Սուլթան Համիտին մտահոգում է այն պարագան, որ իրարից տասնեակ քիլոմէթրերով հեռու, լրտեսներով ողողուած մի տարածքի վրայ, միեւնոյն կոչերը նոյն գիշեր փակցուել են բոլոր կարեւոր շէնքերի վրայ եւ ոչ ոք չի նկատել կամ գործակալները նախապէս չեն իմացել: Մայր է առնում ձերբակալութիւնների անվերջ մի շղթայ: Զերբակալուածները կալանատներում են թարկուում են գազանային կտտանքների՝ նրանցից խոստովանութիւններ կորգելու համար: Ի վերջոյ Անգարայում տեղի է ունենում նրանց դատավարութիւնը: Սեբաստիայում, Երզնկայում եւ Եոզղատում նոյնպէս տեղի են ունենում հաւաքական դատավարութիւններ: Հեղինակին գնահատմամբ, Անգարայի դատավարութիւնը, որտեղ Ժիրայրի անունը հնչում է շուրջ 70 անգամ, հայոց ազգային ազատագրական պայքարի մեծագոյն դատավարութիւն է, որ հայ պատմագրութեան կողմից համարժէք ուշադրութեան չի արժանացել: Փաստորէն, ինչպէս եզրակացնում է հեղինակը, «Օսմանեան Կայսրութեան դատարանը դատում է հայ ազգային ազատագրական շարժումը»: Իր եզրակացութիւնը հիմնաւորելու համար, Ե. ձեռնգրեան մէջբերում է այն «չորս կարգի մեծ ոճիրները», որոնցով ամբաստանուում էին ձերբակալուածները: «Մեծ ոճիրների» շարքին՝ առաջինը եւ ամենակարեւորը՝ «Հայաստան մը կազմելու ունայն ցնորքն է, որ բոլոր, ամէն տեսակ եղեռնագործութիւններու գլխաւոր եւ միակ սկզբնապատճառն է»:

Հալածանքների եւ ձերբակալութիւնների այդ ծանր օրերին, ինչպէս նկատում է հեղինակը, Ժիրայրը շատ լաւ գիտէր, որ գլխաւոր թիրախներից մէկն էլ ինքն էր: Նա շրջանից չի հեռանում ու ամբողջութեամբ չի թաքնուում: Ստեղծուած նոր իրավիճակի պայմաններում, նա վերակազմակերպում է Եոզղատը եւ շրջակայ 46 հայկական գիւղերը (Օգուզի շրջան): Իշխանութիւնները քայլ առ քայլ հետեւում էին նրան: Այն գիւղը, որ այցելում է նա՝ մի քանի անգամ ենթարկւում է ծանր խուզարկութիւնների: Եոզղատցիները նուիրումով եւ զոհողութիւնների գնով պահպանում են իրենց սիրած գործչին: Խուզարկութիւնների պատրուակի տակ կատարուած բռնութիւնների եւ անօրինութիւնների դէմ Եոզղատը ալեկոծուում է: Տեղի են ունենում բախումներ: Բանտերը լցւում են նոր ձերբակալուածներով, որոնք ենթարկւում են դաժան տանջանքների: Ժիրայրը ցրում է իրեն ընկերակցող ֆետայիների խումբը եւ ժողովուրդի քաջաբանքներին վերջ տալու նպատակով յանձնուում է իշխանութեան: Ինչպէս գրում է հեղինակը՝ ոչ ոք չէր կասկածում տրուելիք պատիժի չափից. Կախաղան»:

Ե. ձեռնգրեանը Ժիրայրի կեանքի եւ գործունէութեան ներկայացմամբ ցոյց է տալիս հայոց ազգային ազատագրական պայքարի մէջ ընդգրկուած կարեւոր մի տարածաշրջանի եւ ժամանակահատուածի իրադարձութիւնները, տալով նաեւ այդ պայքարում մասնակից մարդկանց, տեղի ունեցած դէպքերի եւ յարակից հարցերի մասին հակիրճ ծանօթութիւններ, որոնք ընթերցողին առաջ բաժնում են տեղեկութիւնների հարուստ մի շտեմարան:

Մեր կարծիքով, կարելի է անվարան ասել, որ սոյն աշխատութեան հրատարակումով Ե. ձեռնգրեանին յաջողուել է ընթերցողին ներկայացնել ոչ միայն պատմական նիւթերով հարստացած ու վերամշակուած «Ժիրայր», այլ ամբողջապէս նորովի մի «Ժիրայր», շատ աւելի իրական ու կենդանի, պատմական դէպքերի հեռապատկերին վրայ շատ աւելի ցայտուն երեւացող ու վաւերական մի «Ժիրայր»:


«Ժիրայր»ը ընթերցելուց յետոյ, կրկին անգամ համոզուեցինք, որ անցնող տարեմուտին, ՀՀ ԳԱԱ նախագահութեան որոշումը՝ «Եղիկ ձեռնգրեանին շնորհել պատմական գիտութիւնների պատուաւոր դոկտորի կոչում»՝ միանգամայն տեղին էր եւ ժամանակին: Տարին չլրացած, «Ժիրայր» աշխատութիւնը գալիս հաստատուելու, որ գրքի հեղինակ Ե. ձեռնգրեանը միանգամայն արժանապատիւ տէրն է այդ կոչման: Կասկած չունենք, որ «Հրասիրտները» շարունակուելու են տողանցել եւ նրա ամէն մի նոր հատորը նոր ջերմութիւն կը բերի մեր սրտերին եւ կը բացայայտի հայոց ազատագրական պայքարի նոր դէմքերի:

ՑԱԲԱԿՑԱԿԱՆ

Արաքսի Հէքիմեանի մահուան առթիւ Տէր եւ Տիկ. Կարօ եւ Անի Պէքարեան իրենց խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի հարազատներուն, յատկապէս Տէր եւ Տիկ. Միսաք եւ Թամար Հէքիմեաններուն:

VA Print Media


Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles



Հետաքրքրուած ենք իրենց փոխարժեքով ստանալ՝

- Հայկական երգարաններ
- Կիլիկիոյ պատմական գիրքեր
- Ցեղասպանութեան հետ աւուրնչուած գիրքեր

Եթէ ունիք եման գիրքեր եւ կը փափաքիք զանոնք վաճառել, կը խնդրենք մեզի հետ կապ հաստատել Հեռաձայնելով՝ ՎԱՀԷ ԱԶԱՊԱՀԵԱՆԻՆ:



Նոր Գիրքերու
Տպագրութեան
եւ Հին Գիրքերու
Նորոգութեան

Vahe Atchabahan
2004 E. Washington Blvd. • Pasadena, CA 91104
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com



Մարդահամարը տեղի պիտի ունենայ այս Գարնան

Մարտի կեսին սկսեալ, կրնանք պատասխանել ինն պարզ հարցումներու, որպէսզի կարենանք օգնել տեղեկացնելու, թէ մեր համայնքներուն մէջ, յաջորդ տարի դրամը ինչպէ՛ս պետք է ծախսուի:
 Բոլոր հարցումները պաշտպանուած են եւ գաղտնի:

Իմացեք աւելին՝ այցելելով CaliforniaCensus.org կայքը: